

ՎԵՐԱԳԵՂՈՒՄ

ՀԱՐԱՄԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԵՆ ՈՒՔՐԱՆԻԱ՝ ԱՆՑՆԵԼՈՎ ԱԼԱՍՔԱՅԻՆ

Ալասքայի հանդիպումը ընդհանուր հաշվով Ռուսիա-Միացեալ Նահանգներ Ուքրաինոյ հաշույն ընդհանուր համաձայնության գալն է: Կանուխ է անշուշտ վերջնական եզրակացության յանգիլը, այդուհանդերձ, որոշ Նախագործակներու մասին կարելի է արձանագրումներ կատարել:

Հայաստան-Ագրայեան ուաշինկյընեան հռչակագիրն անմիջապես ետք Ալասքայի հանդիպումի թուականի հրապարակումը իրադարձութիւններու ամուսնով որոշ փոխկապակցութիւններու կը յուշէ: Եթէ Ուաշինկյընեան հռչակագիրը շատ ընդհանուր ուրազծումով Միացեալ Նահանգներու Հարաւային Կովկասի տեղակայումը կ'ենթադրէ, ապա այդ կը նշանակէ ռուսական Նահանջ այդ ճակատին վրայ: Իսկ Նահանջի փոխարէն աշխարհագրական այլ ճակատի վրայ տեղաշարժ. այս պարագային՝ Ուքրանիոյ ուղղութեամբ:

Տարածքներու հարցը անքննարկելի էր Ուքրանիոյ Նախագահին համար, որ ոչ շատ ետք իր այս յայտարարութենէ խօսեցաւ տարածքներու հարցը քննելու կարելիութեան մասին՝ ընդգծելով, որ ժամանակը հասած է պատերազմը դադրեցնելու: Հարաւային Կովկասը Ուքրանիոյ դիմաց սկզբունքը կրնայ աւելի տեսնելի ըլլալ, եթէ համաշխարհային լրատուամիջոցներու հրապարակած նիւթերը համապատասխանեն իրականութեան:

Այսպէս. ըստ «Ռոյթըրզ» գործակալութեան, Ռուսիոյ դաշնութեան Նախագահը Նախապայմաններ ներկայացուցած է ՝ Ուքրանիոյ պատերազմը դադրեցնելու համար:

Ա.- Ուքրանիոյ գիւտած ուժերը դուրս կու գան Տոնետքէն եւ Լուկանսքէն, սակայն Սոււիի եւ հարցովի տարածքները կը վերադարձուին Ուքրանիոյ վերահսկողութեան:

Բ.- Չինացիները չի Նախատեսուիր մինչեւ լիարժեք համաձայնագիրի ստորագրումը:

Գ.- Խրիմի մէջ Ռուսիոյ ինքնիշխանութեան պաշտօնական ճանաչում:

Դ.- Ռուսիոյ դէմ պատժամիջոցներու առնուազն մէկ մասի վերացում:

Ե.- Արգելք Ուքրանիոյ՝ ՕԹԱՆ-ի անդամակցութեան:

Զ.- Ռուսներն լեզուի պաշտօնական կարգավիճակ Ուքրանիոյ մէջ, ինչպէս Նաեւ ռուս ուղղափառ եկեղեցւոյ ազատ գործելու իրաւունք:

Պահ մը ընդունինք, որ այս Նախապայմանները կը համապատասխանեն իրականութեան: Խաղաղութիւն ստանալու համար Քիւն կը գիշի տարածքներ, կը իրաժար ՕԹԱՆ-ի անդամակցութենէն, կ'արտօնէ ռուսերէնին կարգավիճակ տալը եւ ռուս ուղղափառ եկեղեցւոյ անարգել գործունեութիւնը:

Մոսկուան ալ գիտէ, որ բոլոր Նախապայմանները անպայման չեն բաւարարուիր: Այստեղ ամենէն հիմնական խնդիրը տարածքներուն կը վերաբերի: Բանակցային առանցքային նիւթը տարածքներն են: Հոս է, որ փոխգիշումը պիտի փորձեն իրականացընել:

Մամուլի այս հրապարակումները աւելի իրատեսական կը սկսին թուիլ: Մանաւոր որ այս մասին հետեւեցաւ պաշտօնական յայտարարութիւն: Միացեալ Նահանգներու յատուկ բանագնաց Սթիւ Ուիթթֆ յայտարարած է, որ Մոսկուան գիշումներու գացած է Ուքրանիոյ 5 շրջաններու հարցին մէջ աւելի վաղ ունեցած իր դիրքորոշումէն: Ըստ անոր, Սպիտակ տունը Զեյնսքիի հետ պիտի քննարկէ տարածքային փոխանակման հարցը: Ըստ Ուիթթֆի, այս հարցը չէ քննարկուած Փութին-Թրամի հանդիպումին: Ան յոյս յայտնած է, որ Ուաշինկյընը կը կարենայ կազմակերպել Ռուսիոյ, Միացեալ Նահանգներու եւ Ուքրանիոյ միջեւ եռակողմ հանդիպում:

Դժուար է արձանագրելը, որ իսկապէս Թրամի-Փութին հանդիպումին չէ քննարկուած տարածքներու հարցը: Աւելի դիւրին է ընկալելը, որ եռակողմ հանդիպումը տեղի պիտի ունենայ: Եռակողմը կը յիշեցնէ մօտիկ անցեալին կայացած եռակողմ մը դարձեալ Ուաշինկյընի վկայութեամբ եւ միջնորդութեամբ: Կը յիշեցնէ Նաեւ Հարաւային Կովկաս-Ուքրանիա իրադարձութիւններու կապը կամ քաղաքական աշխարհագրութեան փոխանակումը:

«Ա.»

ԱՌԻՆ. «ԼԻԲԱՆԱՆ ԵՐԿՈՒ ԸՆՏՐԱՆՔԻ ԱՌՋԵՒ ԷՐ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՄԵԿՈՒՍԱՅՄԱՆ»

Նախագահ ժողով Առն «Արապիա» արբանեակային պատկերասփիւռի կայանին հարցազրոյցի ընթացքին յայտնեց. «Հըզպալլայի գէները ներքին հարց է, եւ անոր լուծումը կը վերաբերի սահմանադրական հաստատութիւններուն, եւ չեմ կարծեր, թէ հայրենիքին մէջ ո՞նէ մէկը գէները մենաշնորհումին նկատմամբ հարց ունի»:

«Ամերիկեան փաստաթուղթը մերժել ետ կանգնելու որեւէ սպառնալիք չստացանք: Ամերիկացիները միայն ըսին. «Եթէ փաստաթուղթը կ'որոշէր շատ բարի, իսկ եթէ ոչ՝ Լիբանանը մեր հետաքրքրութեան շրջագիծին մէջ պիտի չմնայ», նշեց Նախագահը՝ աւելցնելով. «Լիբանան երկու ըստրանքի առջեւ էր՝ ամերիկեան փաստաթուղթին համաձայնութեան կամ մեկուսացման»:

«Խորհրդարանի Նախագահ Նեպիի Պըրրիի հետ յարաբերութիւնս աւելի քան հոյակապ է, եւ մենք դրական տրամադրուած ենք որեւէ նիւթ քննար-



կելու միայն պետութեան ծածկին տակ: Առաջնահերթութիւնս երկրին մէջ ապահովութիւն ու կայունութիւն հաստատելն է, եւ մենք կ'ողջունենք բոլոր անոնք, որոնք կ'ուզեն առանց մեր ներքին հարցերուն միջամտելու Լիբանանին օգնել»:

«Շնորհակալութիւն կը յայտնենք Լիբանանին օգնելու Մետաական Արաբիոյ ջանքերուն համար», ըսաւ ան՝ աւելցնելով. «Կը ձգտինք Սուրիոյ հետ յարաբերութիւնները բարելաւել եւ սեւտական հովանաւորութեամբ սահմանագծում կատարել»:

Շար.ը՝ էջ 2

ԱԼԱՍՔԱՅԻ ՄԵՋ ԹՐԱՄՓ-ՓՈՒԹԻՆ «ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ ՈՒ ՉԱՓԱՋԱՆՑ ԱՐԴԻՒՆԱԻՏ» ՀԱՆԴԻՊՈՒՄ



Ուրբաթ գիշեր Միացեալ Նահանգներու Ալասքա Նահանգին մէջ տեղի ունեցաւ Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըտ Թրամփի եւ Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութինի վեհաժողովը՝ մասնակցութեամբ երկու երկիրներու պատուիրակութիւններուն:

Հանդիպումը սկսաւ նեղ կազմով: Աւելի ուշ պատուիրակութիւններու անդամները միացան ղեկավարներուն, եւ Թրամփի եւ Փութինի միջեւ հանդիպումը վերածուեցաւ «երեք-երեք» ձեւաչափով հանդիպումի:

Շար.ը՝ էջ 8

Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ՎԱՆԵԻ ՈՒՆՏԻ ՕՐՈՒՆՍ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՋԵԼԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ, ՀՈՂԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՎԹԱՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՄԵՋԻ ՀԱՄԱՐ ԳԵՐԱԳՈՅՆ ԱՐԺԷՔ Է ՈՒ ՅԱՆՉՆԱՌՈՒԹԻՒՆ»

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ



Օրըստօրէ սաստկացող ազգային ու տարածաշրջանային վտանգներու դիմաց ամուր կամք ցուցաբերելու եւ տոկալու համար կարիքը ունինք Նայելու դէպի վեր՝ Աստուծոյ, ու հաւատքով հայցելու Անկէ բխող ամրութիւնն ու յոյսը: Սուրբ Մարիամ Աստուածածինի վերափոխման յիշատակումը մեզի առիթ կ'ընծայէ, որ քով-քովի հաւաքւելով, եկեղեցի դառնալով, վերանորո-

գենք մեր ուխտը եւ վերանորոգ յոյսով դիմադրաւենք մեր արտաքին տիրենքը: Սուրբ Աստուածածին կաւեռի ուխտի տօնին առիթով մատուցուած սուրբ եւ անմահ պատարագի աւարտին հարապետական պատգամը կեդրոնացաւ Հայաստանի ներկայ անորոշ ու մտահոգիչ կացութեան վրայ:

Շար.ը՝ էջ 8

ՀԻՓԵՐ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԻՏՈՐԳԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ, ԼԻԱԶՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԻՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՆ ԵՐԵՒԱՆԻ ԵՒ ՊԻՐԵՍԵԼԻ ՄԻՋԵՆ»

Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութիւնը պիտի շարունակէ իր գործունեութիւնը, անոր լիազօրութեան հաւանական փոփոխութիւնները պիտի քննարկուին Հայաստանի եւ Եւրոպական Միութեան միջեւ: Այս մասին ազգայեանական լրատուամիջոցներուն ըսած է Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան բանբեր Անիթա Հիլթեր:

«Առաքելութեան լիազօրութիւնն է վերահսկել եւ գնդուցել հայ-ազգայեանական սահմանի հայկական կողմին վրայ տիրող կացութեան մասին», ըսած է ան՝ նշելով, որ Եւրոպական Միութիւնը կ'ողջունէ Ազգայեանի եւ Հայաստանի միջեւ խաղաղութեան համաձայնագիրի Նախատորագրումը եւ կողմերուն կոչ կ'ուղղէ՝ կարելի եղածին չափ շուտ ստորագրելու եւ վաւերացնելու գայն:

«ՎԻՃԱՅԱՐՈՅՑ «ՁԱՆԳԵՁՈՒՐԻ ՄԻՋԱՆՅՔ»-Ը ՎԵՐՅՈՒՄԸ Է ԵՒ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԿԱՍԱՐ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ ՏԱՐԱՆՅԻԿ ՃԱՄԲՈՎ»

Կ'ԸՍԵ ԻՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՆԲԵՐԸ

Իրանի իսլամական հանրապետութիւնը կ'աջակցի որեւէ հոլովոյթի, որ կը յանգեցնէ բախումներու դադրեցման, լարուածութեան նուազեցման եւ կայունութեան ստեղծման: Այս մասին շաբաթ օր յայտնած է Իրանի կառավարութեան բանբեր Ֆաթիմա Մոհաժերանի:

«Ի հարկէ, այս աջակցութիւնը պայմանական է եւ հիմնուած է շրջանային երկիրներու կողմէ համաձայնեցուած սկզբունքներու վրայ», գրած է Մոհաժերանի:

Ան ընդգծած է Թեհրանի երեք անսասան սկզբունքները՝ երկիրներու լիակատար գերիշխանութեան պահպանումը իրենց տարածքներուն նկատմամբ, բոլոր պետութիւններու տարածքային ամբողջականութեան պաշտպանութիւնը եւ միջազգային սահմաններու որեւէ փոփոխութեան նկատմամբ վճռական դիմադրութիւնը՝ աւելցնելով, որ Պաքիստ եւ Երեւանի վերջին միացեալ յայտարարութեան մէջ հաշուի առնուած են այդ սկզբունքները:

Մոհաժերանի ընդգծած է, որ առանցքային փոփոխութիւններն մէկը «Ձանգեղուրի միջանցք»-ի վիճալարոյց ծրագիրի չեղեալ նկատուիլն էր:

«Կողմերուն կարծիքով՝ «միջանցք»-ի հարցը վերցուած է օրակարգէն եւ փոխարինուած տարանցիկ ճամբով՝ Հայաստանի լիակատար գերիշխանութեան տակ», յայտնած է ան՝ այդ փոփոխութիւնը կոչելով «դրական եւ ողջմիտ», որովհետեւ անիկա միաժամանակ կ'երաշխաւորէ գերիշխանութիւնը եւ կ'արտօնէ տնտեսական համագործակցութիւն իրականացնել:

«Կովկասեան տազնապի արտաշրջանային ուժերու կամ դերակատարներու միջամտութիւնը կրնայ երկարաժամկետ բացասական հետեւանքներ ունենալ խաղաղութեան եւ կայունութեան համար», Նախագահը շարունակեց ընդգծելով, որ երկարաժամկետ որոշումները պէտք է հիմնուած ըլլան շրջանի երկիրներուն միջեւ համագործակցութեան եւ երկխօսութեան, եւ ոչ թէ արտաքին ճնշման վրայ:

Իրան, եզրափակած է Իրանի կառավարութեան բանբերը, պատրաստ է գործելու իրեն «պատասխանատու դրացի եւ յուսալի գործընկեր», «եթէ համաձայնագիրը աջակցի գերիշխանութեան, կայունութեան եւ շրջանային համագործակցութեան»:

ԱՅՍՕՐ ՈՒԱՇԻՆԿՈՒՆԻ ՄԵՋ ԹՐԱՄՓ-ՋԵԼԵՆՍԻԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Երկար է իմաստալից գրոյց ունեցալ Նախագահ Թրամփի հետ, սկիզբը առանձին, ապա Նաեւ Եւրոպացի ղեկավարներու մասնակցութեամբ: Ընդհանուր առմամբ, մենք գրուցեցինք աւելի քան մեկուկէս ժամ», այս մասին թելեկրամներն իր ալիքին վրայ գրած է Ուքրաինոյ Նախագահ Վոլոտիմիր Չեչենսքի:

«Ուքրանիա կը վերահաստատէ իր պատրաստակամութիւնը՝ կարելի եղածին չափ արդիւնաւետ աշխատելու խաղաղութեան համար:

«Նախագահ Թրամփ ինձի համառօտ վերապով ներկայացուց Ռուսիոյ ղեկավարին հետ իր հանդիպումին գրոյցի հիմնական կետերուն մասին: Կարեւոր է, որ ամերիկեան ուժը ազդէ կացութեան զարգացման վրայ: «Մենք կ'աջակցինք Նախագահ Թրամփի՝ Ուքրանիա-Ամերիկա-Ռուսիա եռակողմ հանդիպման առաջարկին: Ուքրանիա կ'ընդգծէ՝ առանցքային հարցերը կրնան քննարկուիլ ղեկավարներու մակարդակով, եւ եռակողմ ձեւաչափը ատոր համար յարմար է:

«Սպանութիւններու աւարտին, պատերազմի աւարտին վերաբերող բոլոր մանրամասնութիւնները կը պատրաստուիմ քննարկել Նախագահ Թրամփի հետ երկուշաբթի Ուաշինկյընի մէջ: Շնորհակալ եմ իրաւերին համար:

«Կարեւոր է, որ եւրոպացիները ներգրաւուած ըլլան բոլոր փուլերուն մէջ՝ Ամերիկայի հետ համատեղ յուսալի անվտանգութեան երաշխիքներու համար:

«Մենք քննարկեցինք ամերիկեան կողմէն ստացուած դրական ազգանշանները՝ Ուքրանիոյ անվտանգութեան ապահովման մասնակցելու վերաբերելով: Մենք կը շարունակենք համակարգել մեր դիրքորոշումները բոլոր գործընկերներուն հետ: Շնորհակալութիւն բոլոր անոնք, որոնք կ'օգնեն», գրած է Չեչենսքի:

Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըտ Թրամփ յայտնեց. «Ալասքայի մէջ հոյակապ եւ շատ յաջող օր»:

«Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութինին հետ ժողովը հոյակապ անցաւ, ինչպէս Նաեւ ուշ գիշերին հեռաձայնային հաղորդակցութիւնը Ուքրանիոյ Նախագահ Վոլոտիմիր Չեչենսքիի եւ եւրոպացի շարք մը ղեկավարներու հետ, Ներառեալ ՕԹԱՆ-ի ընդհանուր քարտուղարին հետ, որ մեծ յարգանք կը վայելէ», ըսաւ ան: «Բոլորը համակարծիք էին, թէ Ռուսիոյ եւ Ուքրանիոյ միջեւ ահաւոր պատերազմին վերջ տալու լաւագոյն ձեւը անմիջապէս ուղղուիլն է դէպի խաղաղութեան համաձայնութիւն, որ իրապէս վերջ կու տայ պատերազմին, եւ ոչ թէ պարզապէս զինադադարի համաձայնութեան, որ ընդհանրապէս երկարատեւ է չ'ըլլար», նշեց Սպիտակ տան ղեկավարը:

«Ուքրանիոյ Նախագահ Վոլոտիմիր Չեչենսքի երկուշաբթի կէսօրէ ետք պիտի այցելէ Ուաշինկյըն, եւ եթէ հարցերը լաւ ընթանան, Փութինի հետ վեհաժողովի թուական պիտի ճշդենք, եւ ատիկա կրնայ յանգեցնել միլիոնաւոր անձերու կեանքերու փրկութեան», յայտարարեց Թրամփ:

ՇԷՅԽ ՔԱՊԱԼԱՆ. «ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԶԵՆՔԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՀԵՌԱՅՈՒՄԵՆ ԱՌԱՋ ՊԻՏԻ ՉՅԱՆՁՆԷ, ԵՒ ԵԾԷ ՊԵՏՔ ԸԼԼԱՅ ՔԱՐՊԱԼԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ՊԻՏԻ ՄՂԵՆՔ»



Յրգալալայի ընդհանուր քարտուղար Շեյխ Նալիմ Զասեմ ուրբաթ օր պատկերասփռում ընդերքի ընթացքին յայտարարեց. «Կառավարությունը գիտակցաբար կամ անգիտակցաբար խրախուսելու ծրագրեր կը ծառայէ»:

«Դիմադրությունը իր գէնը Իսրայէլի հեռացումէն առաջ պիտի չյանձնէ, եւ եթէ պետք ըլլայ Զարպաւայի ճակատամարտ պիտի մղենք» մեզի ինչ գին ալ արժէ», ըսաւ Շեյխ Զասեմ:

«Կառավարութիւնը ներքին կացութեան որեւէ պայթումի կամ Լիբանանի աւերման ամբողջական պատասխանատուութիւն կը կրէ», յայտնեց Յրգալալայի ընդհանուր քարտուղարը:

«Յրգալալան եւ Ամալ շարժումը համաձայնութիւն գոյացուցին փողոց իջնելու ընտրանքը յետաձգելու՝ բարեփոխումներու առիթ ընծայելու համար», նշեց ան՝ սակայն աւելցուց, որ ցոյցերը կայանալու պարագային կրնան մինչեւ ամերիկեան դեսպանատուն հասնիլ:

Յրգալալայի ընդհանուր քարտուղարը կառավարութեան կոչ ուղղեց՝ լիբանանեան բանակը որեւէ ներքին սադրանքի մէջ չներքաշելու:

ՔՈՒՄԱԹԻ «ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ՃԱԿԱՏՈՒՄԻ ՄԷՋ ՉԵՆՔ, ԵՒ ԲՈՆԱԳՐԱՌՈՒՄԻ ԱՏԵՆ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԶԵՆՔԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ՅԱՆՁՆԵԼ»



Յրգալալայի քաղաքական խորհուրդի փոխնախագահ Մահմուտ Զումարթի «Ժազիրա» արբանեակային պատկերասփիւռի կայանին յայտնեց. «Յրգալալայի ընդհանուր քարտուղար Շեյխ Նալիմ Զասեմ սադրանքէն զգուշացուց եւ նշեց, թէ գէնը յանձնելու որոշումը սադրանքի կը յանգեցնէ»:

«Յրգալալայի ընդհանուր քարտուղարը չսպառնաց, այլ ըսաւ, թէ ստիպուելու պարագային պատրաստ ենք Զարպաւայի պատերազմ մղելու», ըսաւ Զումարթի՝ նշելով. «Դիմադրութիւնը արաբական ազգային անվտանգութեան պաշտպանութեան առաջին գիծն է, եւ այդ հիմամբ պետք է հասկցուի»:

«Լիբանանեան ներքին ճակատումի մէջ չենք, եւ Դիմադրութեան գէնը բռնադաւումի գոյութեան ատեն կարելի չէ յանձնել», շեշտեց ան:

«Կուսակցութեան ընդհանուր քարտուղարի դիրքորոշումը նորութիւն չէ: Ան պաշտպանութեան ռազմավարութեան վրայ շեշտեց, եւ թէ մենք մեր գէնը պիտի չյանձնենք», յայտնեց Զումարթի:

ԱՌԻՆ. «ԼԻՔԱՆԱՆ ԵՐԿՈՒ . . . »

Շարունակուած Ա. Էջէն

«Կը փորձենք երկիրը գերծ պահել որեւէ ներքին ու արտաքին տագնապէ, որովհետեւ անոնք մեզ ուժասպառ դարձուցին: Շիի համայնքը մեր երկրին մէջ հիմնական ու գործօն բաղադրիչ մաս է, եւ երկրին մէջ որեւէ համայնքի վրայ վախճալու հիմք չկայ: Որեւէ համայնքի վրայ վախ չկայ, եւ ես խօսքիս պատասխանատուութիւնը կը շարունակեմ», շեշտեց Նախագահը:

ՊԵՐՐԻ. «ԶԱՐԱԶԱՅԻՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԱՍՆԵՐԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՐ ԿԱՆ ՉԿԱՅ»

Խորհրդարանի Նախագահ Նեպիի Պըրրի իր կարգին «Արապիա»-ի հետ հարցազրոյցի ընթացքին կոչ ուղղեց գէնը պետութեան մենաշնորհը դարձնելու որոշումին շուրջ երկխօսութիւն կատարելու, եւ ոչ թէ ներկայիս առաջարկուած ձեւով՝ ընդգծելով, որ քաղաքացիական պատերազմէ կամ ներքին խաղաղութեան որեւէ սպառնալիք վախ չկայ:

«Պիտի լսեմ ամերիկացի պատուիրակ Թամ Պարրաքի Յրգալալան գինաթափելու պատկերացումը», ըսաւ ան՝ աւելցնելով. «Եւ ամերիկացի պատուիրակին առաջարկելիք ոչինչ ունիմ»:

Պըրրի ըսաւ, որ Յրգալալայի վերաբերեալ որեւէ որոշում կարելի չէ գործադրել, այլքան ատեն որ Իսրայէլ կը մերժէ յարգել իր յանձնառութիւնները:

ՍԱԼԱՄ. «ՇԷՅԽ ՔԱՍԵՄԻ ԽՕՍՔԸ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՈՂԱՏԱԿԻ ՍՊԱՌՆԱԼԻՔ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ»



Կարգապետ Նաուաֆ Սալամ «Շարք Աուսաթ» օրաթերթին հետ հարցազրոյցի ընթացքին յայտարարեց. «Յրգալալայի ընդհանուր քարտուղար Շեյխ Նալիմ Զասեմի խօսքը քաղաքացիական պատերազմի տողատակի սպառնալիք կը պարունակէ, եւ այսօր Լիբանանի մէջ չկայ մէկը, որ քաղաքացիական պատերազմ կ'ուզէ: Զաղաքացիական պատերազմով սպառնալը ամբողջովին մերժելի է»:

Ան յայտնեց, որ Շեյխ Զասեմի խօսքը «հասարակութեան ուղղուած ամբողջական քարոզչական խօսք է: Դժբախտաբար ապակողմնորոշման փորձ է: Յաստատօրէն այս կառավարութիւնը լիբանանեան հայրենասեր կառավարութիւն է, որ իր որոշումները կու տայ Նախարարներուն ճամբով, եւ ոեւէ մէկուն ցուցմունքներուն ենթակայ չէ, այլ իրեն ուղղուած լիբանանցիներու պահանջին»:

«Կը կարծեմ, որ լիբանանցիները իրենց ջախջախիչ մեծամասնութեամբ որոշումներուն հետ են լիբանանեան կառավարութեան, որ այսօր գէնքի մենաշնորհման ծրագիր կը մշակէ: Այդ առնչութեամբ որեւէ կասկած չունիմ: Անիրաւ է ըսել, թէ այս կառավարութիւնը ցուցմունքներու ենթակայ է: Դժբախտաբար, վեճերու մէջ չմտնելու համար չեմ ուզեր ըսել, սակայն գիտեմ, թէ ո՛վ ցուցմունքներու ենթակայ է, ո՛վ ցուցմունքներու մտիկ կ'ընէ, ո՛վ ինքզինք արտաքին կողմերու շարունակութիւնը նկատեց: Այս կառավարութեան մէջ ոչ ոք ինքզինք արտաքին որեւէ կողմի շարունակութիւն կը նկատէ», աւելցուց ան:

«Ոչ ոք պահանջեց Յրգալալայի գէնը խրախուսելու թշնամիին յանձնել, ինչպէս ոմանք կը պնդեն, այլ՝ լիբանանեան բանակին, որուն հայրենասիրութիւնը կասկածի առնելը կը մերժենք», ըսաւ վարչապետը:

«Չգուշացէ՛ք անպատասխանատու վարմունքներէ, որոնք սադրանքի դիմել կը քաջալերեն», յայտնեց Սալամ:

Կ'ԸՍԷ ԻՐԱԶԻ ԱՐՏԱԶԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ

Իրաքի արտաքին գործոց նախարար Ֆուատ Յիւսէյն նշեց. «Լիբանանի մէջ Յրգալալայի գէնը կարելի է վերցնել միայն երկխօսութեան ճամբով, ինչպէս որ իրաքեան աշխարհագործի գէնը կարելի չէ բռնի ուժով վերցնել»:

«Աշխարհագործի օրէնքի առաջադրման թայմինկը շրջանին մէջ տագնապներու լոյսին տակ ճիշդ չէր», ըսաւ Յիւսէյն:

«Աշխարհագործի օրէնքի առաջադրման թայմինկը ճիշդ չէր, եւ ես միակ նախարարն էի, որ ատիկա նախարարաց խորհուրդին մէջ ըսի նախքան օրէնքի նախագիծը խորհրդարան ուղարկելը, մանաւանդ շրջանային ու միջազգային պայմաններուն եւ իրան-ամերիկեան տագնապի պայմաններուն մէջ», յայտնեց իրաքեան դիւանագիտութեան պետը:

«Չինաթափման համար խմբաւորումներուն հետ ողջախոս երկխօսութեան կարիք ունիք, եւ կարելի չէ անոնց գէնը բռնի ուժի կիրարկման ճամբով վերցնել, որովհետեւ ատիկա ներքին կռիւի կը յանգեցնէ: Ազգային երկխօսութենէն առաջ կարիքը ունիք ներշնչական երկխօսութեան՝ շիիական կուսակցութիւններու եւ շիի ղեկավարներու ծիրին մէջ, սակայն դժբախտաբար մինչեւ հիմա այդ առնչութեամբ երկխօսութիւն չկայ, բացի գինւորական գործողութիւնը սառնեցնելէ կամ որեւէ գործողութիւն չկատարելէ», աւելցուց ան:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

● ԱՄԵՐԻԿԱՅԻ պատուիրակ Թամ Պարրաքը այսօր ամերիկացի դիւանոցի մէջ ընդունուեց:



Նագետ Մորկըն Օրթէյլըսի ընկերակցութեամբ կ'այցելէ Լիբանան:

● ԴԻՄԱԶԳԻՏԱԿԱՆ աղբիւր մը յայտարարեց. «Անպա» օրաթերթին. «Պարրաքի եւ Օրթէյլըսի այցելութիւնը ճնշումի բնոյթ կը կրէ եւ Ուաշինկթընի կողմէ յստակ պատգամներ կը բերէ նուրբ պահու մը մէջ, ուր ներքին ուղին կը խաչաձեռնի միջազգային ու շրջանային շարժումին հետ, ինչ որ զայն կը դարձնէ արտակարգ ուշադրութեան կեդրոն»:

● ԱՐԲԻՐ մը «Նիտա Ուաթան» օրաթերթին. «Պարրաքի եւ Օրթէյլըսի այցելութեան արդիւնքը կրնայ դրական ըլլալ, մանաւանդ լիբանանեան պետութեան գէնը մենաշնորհելու ծրագրին նկատմամբ իր լռելիութիւնը եւ հակառակ բոլոր մարտահրաւերներէն»:

թեան կարիք ունիք, եւ կարելի չէ անոնց գէնը բռնի ուժի կիրարկման ճամբով վերցնել, որովհետեւ ատիկա ներքին կռիւի կը յանգեցնէ: Ազգային երկխօսութենէն առաջ կարիքը ունիք ներշնչական երկխօսութեան՝ շիիական կուսակցութիւններու եւ շիի ղեկավարներու ծիրին մէջ, սակայն դժբախտաբար մինչեւ հիմա այդ առնչութեամբ երկխօսութիւն չկայ, բացի գինւորական գործողութիւնը սառնեցնելէ կամ որեւէ գործողութիւն չկատարելէ», աւելցուց ան:

րուն զայն մինչեւ վերջ կատարելու լռելիութիւնը ցոյց տուաւ»:

● ԴԻՄԱԶԳԻՏԱԿԱՆ աղբիւր մը յայտարարեց. «Անպա» օրաթերթին. «Ուաշինկթընի կարծիքով՝ Պէրլուրթի կատարածը տեսակարար քայլ մըն է, որ պետք է միջազգային մակարդակի վրայ ամրապնդել Ամալ շարժումի եւ Յրգալալայի ընդդիմութեան դիմաց»:

● ՆԻՏԱ ՌԻԹԱՐԸ՝ օրաթերթ. «Բանակը լուրջի առաւ ընկերային ցանցերուն վրայ այսպէս կոչուած «սուրիական ցեղախուժներ»-ու վերագրուած սպառնալիքը, թէ լիբանանեան հողեր պիտի ներխուժեն, եթէ սուրիացի կառավարութեան թաքստոցները ազատ չարձակուին»:

● ԼԻՔԱՆԱՆԵԱՆ բանակ. «Բացարձակապէս ճիշդ չեն կարգ մը լրատուամիջոցներու եւ կայքերու այն հաղորդումները, թէ օդուժը սուրիական օդային տարածքը ոտնահարած է՝ սուրիական կողմէն գինւորական շարժումներու հետեւելու նպատակով»:

● ԻՍՐԱՅԷԼԻ վարչապետ Պենիա-մին Նեթանիահու յայտարարեց. «Օդուժը Լիբանանի մէջ Յրգալալայի ղեկավարներու եւ իրթիներուն արձակման հարթակներու թաքստոցներու դէմ յարձակում գործեց»:

«Լիբանանի մէջ ռմբակոծումը կը կատարուի գինադաղարի համաձայնութեան հիմամբ, եւ Յրգալալայի կողմէ գինադաղարի համաձայնութեան որեւէ խախտումի պիտի թիրախաւորենք», պնդեց Նեթանիահու:

ԺԱՀԺԱՀ «ՇԷՅԽ ՔԱՍԵՄԻ ԽՕՍՔԸ ԻՒՐԱՔԱՆՉԻՐ ԱԶԱՏ ԼԻՔԱՆԱՆՅԻ ՌԻՂՂՈՒԾ ՍՊԱՌՆԱԼԻՔ Է»

Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր Շահժահ յայտնեց. «Շեյխ Նալիմ Զասեմի երեկուան ճամբ բոլոր արժեքափերով մերժելի է, որովհետեւ ուղղակի սպառնալիք է նախ եւ առաջ լիբանանեան կառավարութեան, երկրորդ՝ այս կառավարութեան վըստահութեան քուէ տըրած երեսփոխանական մեծամասնութեան եւ Լիբանանի մէջ բոլոր սահմանադրական կառոյցներուն, առաջին հերթին Նախագահութեան ու կառավարութեան ղեկավարութեան»:

«Անիկա Նաե իւրաքանչիւր ազատ լիբանանցիի ուղղուած սպառնալիք է: Եթէ Շեյխ Նալիմ կը կարծէ, թէ Լիբանանի մէջ այլեւս ազատ լիբանանցիներ չեն մնացած, կը սխալի, շատ կը սխալի: Ան դարձեալ, դարձեալ ու դարձեալ կը սխալի», նշեց Շահժահ:

«Լիբանանի պատմութեան մէջ այս զգայուն պահուն, բոլորս՝ իբրեւ ազատ լիբանանցիներ, եւ մենք Լիբանանի մէջ ջախջախիչ մեծամասնութիւնն ենք, կը կանգնինք ետին մեր սահմանադրական հաստատութիւններուն, որոնք ներկայացուած են նախ եւ առաջ հանրապետութեան Նախագահ Շադէֆ Աուսով եւ վարչապետ Նաուաֆ Սալամով, որոնք ամենայն հայրենասիրութեամբ, ձգտումով եւ ուժով կը ջանան Լիբանանը իր ինքնութեան վերադարձնելու, իսկական պետութիւնը իր կանոններուն վերադարձնելու, Լիբանանի բարեկամները վերադարձնելու, ինչպէս Նաե միջազգային ընտանիքը անոր կողքին վերադարձնելու», նշեց Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավարը:

«Ներկայ փուլը բացառապէս հիմադրական փուլ է, եւ որեւէ ջանք պիտի չխնայենք մեր սահմանադրական կառոյցներուն աջակցելու եւ բոլորս անոնց ետին ու կողքին կանգնելու: Որեւէ ջանք պիտի չխնայենք ոեւէ մէկուն չարտօնելու, որ այս նոր փորձը ձախողցնէ», յայտնեց Շահժահ:

ՀԱՅՏԱՐ. «ՄԵՐ ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄԸ ԱՅՆ Է, ՈՐ ՀՐԶՊԱԼԼԱՅԻ ԶԵՆՔԻ ԽՆԴԻՐԸ ԵՐԿԻՍՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ ԼՈՒԾՈՒԻ»



Աշխատանքի նախարար Մոհամետ Յայտար յայտնեց. «Մեր պատկերացումը այն է, որ Յրգալալայի գէնքի խնդիրը պէտք է լուծուի երկխօսութեան ճամբով եւ ոչ թէ որոշումներով»:

Յայտար «Ժազիրա» պատկերասփիւռի կայանին հետ զրոյցի ընթացքին շեշտեց. «Մենք գէնը ուզէն ներքին ճակատումի հասնիլ, այլ կ'ուզենք մեր երկիրը պահպանել»:

«Հակառակ բարձր լարուածութեան, պէտք է երկխօսութիւն կատարենք եւ այս խնդիրները լուծելու համար հասարակաց հարթակ գտնենք», շեշտեց Նախարարը:

«Բանակին եւ զայն զօրացնելու կողքին կը կանգնինք, որպէսզ ան կարենայ հայրենիքը պաշտպանել եւ ամբողջական կերպով ապահովութիւնը ղեկավարել», աւելցուց Յայտար:

ՄԱՀԱԶԴ

Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութիւնը սրտի խոր կսկիծով կը գուժէ հաւատաւոր համազգայնական, «Համօ Օհանջանեան» մասնաճիւղի Նախկին ատենապետ՝

ԿԱՐՕ ՔԻՐԻԱՔՈՅԻ

մահը, որ պատահեցաւ ուրբաթ, 15 օգոստոս 2025-ին:

ՄԱՀԱԶԴ

Համազգայինի «Գասպար Իփէկեան» թատերական մասնագիտական մասնաճիւղի թատերախումբն ու վարչութիւնը կը գուժեն մասնաճիւղի անդամ, Նախկին ատենապետ եւ թատերախումբի երկար տարիներու բեմավար

ԿԱՐՕ ՔԻՐԻԱՔՈՅԻ

մահը, որ պատահեցաւ ուրբաթ, 15 օգոստոս 2025-ին:

● Խորին ցաւակցութիւն անոր ընտանիքին եւ հարազատներուն:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՒԱՔ (ՖՈՐՈՒՄ) 2025՝ ՆՈՐ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ, ՀԱՐՈՒՍՏ ԾՐԱԳԻՐ

2024-ին Հայաստանը տեսնելու ելքային երազ, առաջին վայրէջք հայրենի հողին վրայ, առաջին հայացքը դեպի Արարատ եւ առաջին քայլերս Երեւանի մէջ իրականութիւն դարձան Համազգայինի ուսանողական հաւաքին՝ Ֆորումին միջոցով: Ամեն ինչ նոր էր, բայց՝ հարազատ: Այո՛, մասնակցած եմ Ֆորումին՝ 2024-ին եւ 2025-ի: Այս երկու տարիներուն ընթացքին ծանօթացայ տարբեր գաղութներ եւ մշակոյթներ եկած հրաշալի անհատներու: Ֆորումը ինձի համար եղաւ աւելին, քան մշակութային ծրագիր կամ հաւաք մը. ան դարձաւ կամուրջ մը դեպի հայրենիք, արմատներ, լեզու, պատմութիւն եւ ինքնութիւն:

Այս տարի, երկրորդ անգամ ըլլալով, դարձեալ Ֆորումի միջոցով վերադարձայ Հայաստան: Բայց այս անգամ հայրենիքիս հանդէպ սերս աւելի խորացած էր, իսկ հոգիս աւելի ան-



համբեր՝ վերապրելու այն պահերը, որոնք միայն հոն կարելի էր զգալ: Ցանկացայ կրկին վայելել հայրենի բնութիւնը, տեսարժան վայրերը եւ Արարատի խոնարհ, բայց վեհ Ներկայութիւնը: Հայաստան վերադառնալու եղաւ ո՛չ միայն նոր այցելութիւն մը, այլ վերադարձ՝ ինձմէ այն բաժինին, որ միայն այդտեղ կ'ապրի:

Համազգայինի ուսանողական հաւաքը սքանչելի առիթ մըն է՝ սփիւռքի եւ հայրենիքի մէջ գտնուող հայ երիտասարդներ իրարու միացնելու, անոնց մօտէն ծանօթացնելու եւ խորացնելու հայկական մշակոյթին ու անսնդութիւններուն: Տարբեր երկիրներէ ժամանած երիտասարդներ շուտով, Ֆորումի առաջին օրէն իսկ, կը հաստատեն սերտ կապեր՝ դառնալով ո՛չ միայն ընկերներ, այլ՝ եղբայրներ ու քոյրեր պատրաստ՝ միասին ապրելու եւ ամբողջացնելու ծրագիրը: Այս մօտեցումն ու ընդհանուր ոգին վկայութիւն են, որ Ֆորումը ամբողջովին իր նպատակին կը հասնի: Իբրեւ երկու տարուան մասնակից՝ ես անձամբ ականատես եղայ այս բոլորին: Տեսայ, զգացի եւ ապրեցայ այն ուժը, որ ունին հայ երիտասարդները, երբ կը հանդիպեն եւ միասին կը կապուին հայրենիքին: Վստահ եմ, որ Ֆորումը պիտի շարունակէ մնալ այդ սքանչելի կամուրջը, որ կը միացնէ՝ սփիւռքը հայրենիքին, անցեալը ապագային եւ անհատը իր ինքնութեան:

Շաբաթ, 19 յուլիս 2025-ին տեղի ունեցաւ Համազգայինի ֆորումի 30-ամեակի բացումը, զոր կատարեց «Ֆորում 2025»-ի ընդհանուր պատասխանատու Տօկիկ Տօնապետեանը: Ան Ներկայացուց ֆորումին նպատակը եւ մասնակիցներուն վրայ ձգած ազդեցութիւնը, ինչպէս նաեւ այս տարուան ծրագիրը, զոր պիտի ամբողջացնէինք յաջորդող օրերուն: Յուզարդուեցաւ նաեւ՝ տեսերիզ մը՝ Համազգայինի գործունեութեան մասին՝ ֆորումի օրէնքներուն մասին, եւ այլն: Այդ գիշեր ունեցանք մեր առաջին ընթրիքը, եւ հակառակ անոր որ արեւմտահայերէնի ու արեւելահայերէնի լեզուական տարբերութիւններ կային, արդէն առաջին երեկոյէն կարողացանք զիրար լաւ ճանչնալ եւ մտերմանալ:

19-31 յուլիսի տեղի ունեցած այս ուսանողական հաւաքին մասնակցեցան 26 հայ երիտասարդներ սփիւռքի տարբեր գաղութներէ՝ Սուրիայէն, Ֆրանսայէն, Լիբանանէն, Զանաւա-յէն, Աւստրալիայէն, Պրագիլէն, Ռուսիայէն եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, ինչպէս նաեւ՝ Հայաստանէն եւ Արցախէն:

Ֆորումի ծրագիրը հարուստ էր՝ այցելութիւններով, դասախօսութիւններով, մշակութային ձեռնարկներով եւ ընկերային պահերով: Ֆորումականներս այցելեցին Գառնի՝ Գեղարդ, Էջմիածնի մայր տաճար, Մատենադարան, Սուրբ Գայիանէ



վանք, Եռաբլուր, Խոր Վիրապ, ուր եւ ու երկու ֆորումականներ երգեցին «Here's to you Ararat» երգը՝ դիտելով մեր Արարատը, Ծիծեռնակաբերդ եւ Ցեղասպանութեան թանգարան, ուր իւրաքանչիւր յուզուած՝ դժուար կը զսպիւնք մեր զգացումներով: Այցելեցինք՝ ԹՈՒՄՕ ստեղծարար արհեստագիտական կեդրոն, Հայաստանի ամերիկեան համալսարան, Սասունցի Դաւիթի արձանը, «Մամիկ», ուր համտեսցինք մեր իսկ պատրաստած լաւաշ հացերը:



Հանդիպում ունեցանք «Դեպի Հայք»-ի տնօրէնին հետ (Birthright Armenia), որ մեզի Ներկայացուց այս ծրագիրին գործունեութեան մասին: Երեւանի պետական համալսարանէն



Ներսէս մեզ հիւրընկալեց Արման Եղիազարեանը՝ Ներկայացնելով Երեւանի պետական համալսարանի անցեալն ու Ներկան: Շարունակելով՝ այցելեցինք Կոմիտասի, Թումանեանի եւ Սարգսի թանգարանները, ինչպէս նաեւ՝ Ազգագրական արուեստի թանգարան:

Դասախօսութիւններու շարքը առանձնապէս հետաքրքրական էր: Մասնակիցներս ուշի ուշով կը հետեւէինք դասախօսներուն, որոնցմէ քանի մը հատը կ'արժէ նշել. «Պտույտ մը հայ երաժշտութեան արահետներով»՝ Ծովինար Արծրունի, «Հայ



աշուղներ, հայկական նուագարաններ»՝ Թովմաս Պօղոսեան, «Համազգայինի կառոյցը. կրթական եւ մշակութային գործունեութիւն»՝ Չաբար Բէշիշեան, «Հայկական ինքնութիւնը. ո՞վ է հայը»՝ Ռուբեն Ճանապազեան, «Հայկական ճարտարապետութիւն»՝ Յովիկ Աշոցեան, եւ մեր սիրած դասախօսութիւններէն մէկը՝ «Խաչքարերու ծանօթացում եւ վարպետաց դասընթացը»՝ Նարինէ Փոլատեան, Գիւմրիի մէջ, ուր իւրաքանչիւրս անձամբ աշխատեցանք մեր խաչքարերուն վրայ:



Յուլիս 22-ին առիթը ունեցանք վայելելու Ֆորումի 30-ամեակին նուիրուած բացառիկ համերգը՝ «Սիմֆոնիք Ֆոլք»-ը, կատարողութեամբ լիբանանահայ նշանաւոր երիտասարդ երաժիշտ Սերուժ Պաղտասարեանին եւ Հայաստանի պետական սիմֆոնիք նուագախումբին: Ամբողջ համերգին ընթացքին բոլորս խորապէս յուզուած էինք, մանաւանդ երբ նկատեցինք, թէ որքա՛ն մարդիկ տարբեր երկիրներէ հաւաքուած էին վայելելու այս սքանչելի համերգը: Բառերով դժուար է նկար-



րագրել սրահի ջերմ ու համախմբող մթնոլորտը: Ամենէն յիշարժան պահերէն էին, երբ մանուկները բժմ բարձրացան ու երգեցին «Գողթան մանկտիք»-ը, եւ համերգի աւարտին բոլորս միասին պարեցինք «Քոչարի»-ն: Շնորհակալութիւն կը յայտնեմ մեր Սերուժին՝ մեզի այսպիսի աննկարագրելի համերգ մը պարգեւելուն համար:

Յուլիս 23-ին, կազմակերպութեամբ Ֆորումի յանձնախումբին, նախկին եւ Ներկայ ֆորումականներով տօնեցինք Ֆորումի 30-ամեակը՝ «Պանդոկ Երեւան»-էն Ներս: Յուլիս 25-ին Ներկայ գտնուեցանք նաեւ «Ջաւախեան մեղեդիներ» համերգին, նուիրուած՝ Ֆորումի 30-ամեակին:

Յուլիս 27-ին այցելեցինք Ծաղկաձոր, ուր վայելեցինք ճոպանուղին եւ կանաչ բնութեան գեղեցկութիւնը: Այդտեղ միասնաբար ճաշեցինք եւ ազգային երգեր երգեցինք: Կեսօրէ ետք, Երեւան վերադառնալով, մասնակցեցանք Վարդավա-



ռին, իսկ 28 յուլիսին ունեցանք երկար օր մը: Այցելեցինք՝ Սաղմոսավանք, Ամբերդ, Տառնուր պուրակ, ուր բոլորս նկարուեցանք «Հ» տարին դիմաց՝ իբրեւ խորհրդանշիչ Համազգայինին, ապա մեր այցելութիւնը շարունակեցինք դեպի Արագած լեռ, ուր լեռան լանջին բոլորս միասին ճաշեցինք եւ պարեցինք շուրջապար՝ Սերուժ Պաղտասարեանի «Մուսա Լեռան դաբկի» երաժշտութեան տալ: Երեկոյեան, ունեցանք զրոյց մը՝ հայկական համայնքներու մասին, մեզմէ իւրաքանչիւրը Ներկայացուց իր երկրի հայ գաղութը:

Յուլիս 29-ի առաւօտեան բոլորս միաժամանակ ուրախ եւ տխուր էինք: Ուրախ, որովհետեւ պիտի վայելէինք Գիւմրիի գեղեցկութիւնը, եւ տխուր, որովհետեւ ֆորումը կը մօտենար իր աւարտին, եւ գիտէիք, որ միասին անցուցած մեր օրըրը պիտի դառնային անմոռանալի յուշեր: Սակայն այդ օրը ես ապրեցանք ամբողջութեամբ՝ ժպիտով եւ խանդավառութեամբ: Գիւմրիի ճամբուն վրայ այցելեցինք Օշականի մէջ զըտ-



նուող Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, ուր եկեղեցու վարդապետին հետ զրոյց մը ունեցանք գիրերու գիտուի եւ հայոց լեզուի մասին: Հոն տեսանք Սուրբ Մեսրոպ Մաշտոցի եւ իր աշակերտ Վահան Ամատունի իշխանին գերեզմանները: Գիւմրիի հասնելով՝ խմբապետական կազմը պատրաստած էր հաճելի խաղ մը՝ հետազօտական արշաւ: Բաժնուեցանք երեք խումբերու, եւ ամէն խումբ ունեցաւ իր հարցարանը: Այս արշաւին նպատակն էր մեզ աւելի մօտէն ծանօթացնել Գիւմրիին եւ շփում ունենալ Գիւմրիի բնակիչներուն հետ: Կ'արժէ նշել քանի մը հարցում, օրինակ՝ գտնել թէ նախապէս ի՞նչ կը կոչուէր Գիւմրին, գտնել, Գիւմրիի բնակիչներէն վերապրող մը եւ ար-



ձանագրել 1988-ի երկրաշարժի դէպքերէն պատմութիւն մը, գտնել Գիւմրիի ամենէն իին սափրիչի խանութը եւ այլն: Յաջորդ օրը այցելեցինք «Սիւր Սկուտեան», «Յովհաննէս Ծիրազ» եւ «Աւետիք Իսահակեան» տուն-թանգարանները: Հաճելի եւ յուզիչ հանդիպում մը ունեցանք «Համազգայինը Արցախի մանուկներու կողքին» ծրագիրի մանուկներուն հետ:

ՍԱՐԻԷԼԸ ԾԵՅԻՉԵԱՆ

Շաբ.ը՝ Էջ 6

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ «ՀԱՅՐԵՆԻԻԷ»-Ի

«ԻՆՉ ՀԻԱՍՔԱՆՉ
ԱՇԽԱՐՀ ՄԸ...»



What a Wonderful World

«I see friends shaking hands
Saying, «How do you do?»
They're really saying
I love you?»

«...Կը տեսնեմ բարեկամներ, որոնք իրարու ձեռք կը թթռունեմ,
Կ'ըսեն՝ «Ինչպե՞ս եք»,
Իրականության մեջ կ'ըսեն՝
Կը սիրեմ ձեզ»:

Լուիս Արմսթրոնկի այս հանրածանօթ երգին մեկ տարբերակով աւարտեցաւ 8 օգոստոսի եռակողմանի Թրամփ-Փաշինեան-Ալիեի հանդիպումը՝ Ուաշինկթընի մէջ: Երեք իշխանականներու խօսքերէն եւ մամուլոյ ներկայացուցիչներու հարց-պատասխաններէն ետք, երբ հանդիպումը աւարտեցաւ, ներկաները լա՛յն ժպիտներով սկսան իրարու ձեռք թթռունել եւ ողջագուրուիլ, այդ ատեն հնչեց «Ի՛նչ հիասքանչ աշխարհ մը»-ին մեկ լարային տարբերակը:

Կազմակերպող մարմինը հմտօրէն ընտրած էր այս գործը, որ հեռու պատերազմներէ, աղետներէ եւ փորձանքներէ՝ կը ներկայացնէ աշխարհի դրական կողմը... Եթէ անշուշտ դեռ նման բան գոյութիւն ունի: Արուեստն ու մշակոյթը յաճախ օգտագործուած են Արեւմուտքին եւ յատկապէս Միացեալ Նահանգներու կողմէ՝ տպաւորելու, սիրաշահելու եւ ներգործելու համար օտար զանգուածները:

... 1960-ականներու սկիզբը Լորանկախ Քոնկոյի երիտասարդ ղեկավար Փաթրիս Լոււմումպա ամենայն ինքնավստահութեամբ կոչ ուղղեց Արեւմուտքին՝ դարդեցնելու իր երկրի նախանիւթերու շահագործումն ու կողոպուտը, եւ շահեցաւ կայծակնային ժողովրդականութիւն: Այդ օրերու Սպիտակ տան վարձակալ Տուայթ Այզլենհաուեր եւ իր արտաքին քաղաքականութեան ղեկավարութիւնը մտադաշու մը ունեցան արեւմտամետ մթնոլորտ մը ստեղծելու եւ Քինշասա դրեցնել Նոյնիսըն Լուիս Արմսթրոնկը, որ սեւամորթ ըլլալով, կը կարծուէր, թէ իր ելոյթներով պիտի խանդավառէր տեղացիները: Կարճ ժամանակ մը ետք աշխարհահռչակ եւ մեծ ժողովրդականութիւն վայելող փողոցահարը իրագէլ եղաւ, որ ինկած էր մեծ ծուղակի մը մէջ: Այդ տարիներուն, վերոյիշեալ՝ «Ի՛նչ հիասքանչ աշխարհ մը» երգը դեռ չէր յօրինուած. կարճ ժամանակ մը ետք Ափրիկէի Զասթրոն նկատուած Լոււմումպան սպաննուեցաւ: Անկէ ետք ազգային շահեր հետապնդողներու սպառնը, ո՛չ միայն Ափրիկէի մէջ, երկար հաշուեցոյց կազմած է:

Զանի մը տարի ետք՝ 1963-ին, միեւնոյն մտասէտեռնով այս անգամ Մերձաւոր Արեւելք «գործուղուեցան» խումբ մը երաժիշտներ՝ գլխաւորութեամբ դաշնակահար Տիւք Էլիսկընի, որպէսզի, իրենց կարգին, Իրանի, Իրաքի, Սուրիոյ, Լիբանանի եւ Եգիպտոսի մէջ ելոյթներ ունենալով՝ խանդավառութիւն ստեղծեն: Արտաքին գործոց նախարարութեան ֆինանսաւորումով կազմակերպուած եւ «ճագի դիւանագիտութիւն» որակումը կրող շրջապատոյցը երկար կեանք չունեցաւ, երբ նախագահ Քենետի սպաննուեցաւ: Սա արդէն այլ երկար պատմութիւն մըն է, որուն մասին կարելի է յատուկ ուսումնասիրութիւն մը պատրաստել: Նշենք նաեւ գէթ փինկփոնկի դիւանագիտութիւնն ու... ֆուլթալոյաին դիւանագիտութիւնը:

Արդ, արդեօք պարզ գուգադիպութենէ աւելին տեսնելով՝ կարելի չէ՞ ենթադրել, թէ 8 օգոստոսի հանդիպումը տեղի ունեցաւ հանրածանօթ երգչուհի Ընէնիֆըր Լոփեսի Երեւանի մէջ ունեցած ելոյթէն միայն քակի մը օր ետք (ընթերցողին հայեցողութեան կը ձգենք, թէ մակարդակը որքա՛ն ինկած է՝ համեմատած վերոյիշեալ արուեստագետներուն): Դեմոկրատներու իւր կամակատար ճանջցուած «Ճէյ Լօ»-ն հաւանաբար ինքն ալ Արմսթրոնկի եւ այլոց նման, չէր գիտեր, թէ անուղակիօրէն կ'օգտագործուէր այս անգամ թրամփեան քարոզչական մեքենային կողմէ: Իսկ խօսի՛լ ներկաներուն եւ յատկապէս հաւաքուածներուն մասին... մեկնաբանութեան կարիք չկայ:

Հապա ի՞նչ ըսել Ուաշինկթընի հանդիպումի ներկաներուն ու ընդհանրապէս կատարուած «շօ»-ին մասին, մանաւանդ երբ Նիւ Եորքի մէջ եւ այլուր բազմաթիւ հողաշերտերու տեր-տիրական Թրամփ աչքերը ուղղած է իրեն ծանօթ տարածքներէ շա՛տ հեռու՝ հազարաւոր մղոններ հեռու, մեր Սիւնքին, ու պիտի տեսներ, թէ բախտը ուրիշ ձեւով կը ժպտեր իրեն, Ազրայէլեան-Նախիջեան ճամբան պիտի կրէր իր անունը, գօտի մը, որուն տերն ու տիրակալը պիտի ըլլար 99 տարի (չմոռցաւ ըսելու, որ... կարելի է պայմանագիրը երկարաձգել): Իր հանրածանօթ՝ առեւտրական խօսակցութեան ոճով, ան իր անկեղծ սերը յայտնեց այս միջանցքին: Իրեն համար ի՛նչ կարեւորութիւն ունի, թէ անկկա համաթուրանականութեան մայրուղին է, եւ ահա ինք (այսինքն՝ ամերիկեան վարչամեքենան) կը հովանաւորէ Թուրքիոյ դարաւոր երազը, որուն կ'ընկերանայ իր երազած առեւտրական համալիրներու ծրագիրը:

Շար.ը՝ էջ 6

ՅՈՒՇԵՐ ՈՒ ՏՊԱՒՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՅԱԳԷՏ
ՈՒ ՍՓԻՒՌՔԱՇՐՋԻԿ ՄԱՆԿԱՎԱՐԺ
ՄԱՆՈՒԷԼ ՔԵՕՍԷԵԱՆԻ ԿԵԱՆՔԷՆ ՈՒ ԳՈՐԾԷՆ

Վերջերս «Պայքար» շաբաթաթերթին մէջ հանդիպեցայ գրախօսականի մը՝ 1986-ին Փարիզ լոյս տեսած «Աստուածամայր» խորագիրով հատորին. յօդւածին հեղինակը մեծատաղանդ հայագետ, բանաստեղծ եւ մանկավարժ հանգուցեալ Մանուէլ Քեօսեանն էր: *Քեօսեանի եւ Շանթ Աւետիսեանի աշակերտներն, Բաֆֆի Չէլէեան եւ Լտուար Շուշանեան գեղանկարչութեան հետեւեցան*

Միտքս սկսաւ փոթորկել յուշերու հեղեղ մը, որ Մանուէլ Քեօսեան կը կոչւէր:

Մանուէլ Քեօսեան Սուտանի, Եթովպիոյ, Հայաստանի, Երուսաղէմի, Լիբանանի, Կիպրոսի եւ Եգիպտոսի հայկական կրթական հիմնարկներու մէջ հայագիտական նիւթերու ուսուցչական եւ տնօրէնի պաշտօններ վարած է եւ, վերջապէս, մեծ գործունեութիւն ունեցաւ քանատաշայ համայնքին մէջ՝ իբրեւ մանկավարժ, հայագետ ու ազգային գործիչ:

Ան իրաւամբ անխոնջ հայ սփիւռքաշրջիկ մանկավարժ մըն էր:

Իր ջանքերով Մոնրէալի մէջ հիմնուեցաւ Մանուէլ Քեօսեան հայագիտական կեդրոնը, որ իր երախտապարտ աշակերտները կը շարունակեն իր սկսած հայապահպանման ուղին:

Յուշերու հոսանքը շարունակեց միտքս փոթորկել, եւ յուշերու ժապաւեւը արդէն սկսած էր ժամանակը ետ սահեցնել ու սահեցնել:

Յիսուն տարիներ առաջ Մանուէլ Քեօսեանի անունը արդէն լսած էի եղբօրմէ՝ Չարեհէն, որ Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութեան շրջանաւարտ եղած է ու միշտ կը պատմէր, թէ հայագիտական նիւթերու ինչպիսի՜ ազդեցիկ ու ոգէտորիչ ուսուցիչ մը եղած էր Մանուէլ Քեօսեանը, երբ Կիպրոսի մէջ հայերէն կը դասաւանդէր:

Իսկ 1978-ին, երբ ես ուսողութեան ուսուցիչի պաշտօն կը վարէի Գահիրէի Գալուստեան ազգային վարժարանին մէջ, Քեօսեան դարձաւ իմ գործակիցս:

Հարկաւ անելի մօտէն ճանչցայ զայն՝ մարդը, հայը եւ ուսուցիչը, եւ շուտով դարձաւ բարեկամ եւ անուղղակիօրէն հայապիտութեան ուսուցիչ ու պաշտօնակից:

1978-ին՝ Գալուստեանի վարժարանին մէջ ուսուցչութեան օրերուն, պարոն Տընկճեանին սենեակը մեր ամենօրեայ հաւաքատեղին էր՝ Քեօսեան, Նուպար Տընկճեան, Հայկ Սարգիսեան, Չարեհ Շուշանեան եւ ես:

Հայ մշակոյթով մեզ անդադր կը խանդավարէր Քեօսեանը՝ Կոմիտասէն մինչեւ Դանիէլ Վարուժան, ինչպէս՝ հետեւեալ գեղեցիկ բանաստեղծութիւնը, որ մեզ յաճախ ինք է՛ր գէր իր շատ զգացական ձայնով:

**Հունձը կը ժողվեմ մանգաղով,
- Լուսնակը եարս է -
Ակօս ալօս ման գալով:
- Սիրածըս հարս է:**


**Գըլխեբաց եմ ու բոպիկ,
- Անո՛ւշ են հոովը -
Արտերուն մէջ թափառիկ:
- Մագե՛րն են ծովեր:**

**Մանգաղոս քարին եկաւ,
- Եարըս եա՛ր ունի -
Քարէն լորիկը թըռաւ:
- Լե՛րդըս կ'արիւնի:**

Քեօսեան բացառիկ կարողութիւնը ունէր ամեն վարկեան իր շրջանակը քաջաւերելու, ուժ ու յոյս ներշնչելու, ան ունէր քաշողական գորաւոր ուժ մը իր շրջակայքին ազդելու ու իրապարելու՝ ի նպաստ հայ մշակոյթի ու գրականութեան նկատմամբ սիրոյ ու պաշտամունքի, իսկ իր նախընտրեալներն էին՝ Չարեան, Շահնուր, Կոմիտաս, Վարուժան, Իստրա, Չարիֆեան, Դուրեան ու Դեմիրճեան:

Արագօրէն իր շուրջ հաւաքուեցան հայ ոգիով, արուեստասիրութեամբ ու հայրենասիրութեամբ լեցուած երիտասարդներ, որոնցմէ շատերը յետոյ դարձան տաղանդաւոր արուեստագետներ ու մտաւորականներ, ինչպէս՝ մեծատաղանդ համաշխարհային նկարիչ Շանթ Աւետիսեանը, հռչակաւոր խըմբավար ու մանկավարժ Հայկ Սարգիսեանը ու Ֆրանսա ուսանած մեծահռչակ արուեստագետ-ձեւաւորող Զարի Մխտիկեանը եւ շատ ուրիշ իրմով ներշնչուած հայ երիտասարդներ:

Քեօսեան կրցաւ շատ կարճ ժամանակի մը ընթացքին հայ մշակութասիրական շարժում մը ստեղծել Եգիպտոսի մէջ, որուն ազդեցութիւնը երկար տարիներ շարունակուեցաւ:



Պայքար 1 նոյեմբեր 1986



Մանուէլ Քեօսեան




1978-80 Գալուստեան վարժարանի ուսուցչութեան օրերս



Պարոն Նուպար Տընկճեան



Զարի Մխտիկեան



Չարեհ Շուշանեան

Նոյնիսկ իր հեռանալէն ետք, ան երեւոյթ մըն էր՝ անձնաւորութիւն մը ըլլալէ աւելի:

Հանգուցեալ եղբայրս՝ Չարեհ Շուշանեանը, այնքա՛ն ազդուեցաւ:

Քեօսեանի հայագիտական ներշնչող դաստիարակութենէն, որ որոշեց հայագիտութիւն ուսանիլ եւ յաջողեցաւ գերազանցութեամբ մագիստրոսի տիտղոսը ստանալ Երեւանի համալսարանէն:

Անմոռանալի է նաեւ հանգուցեալ աշխարհահռչակ գեղանկարիչ Շանթ Աւետիսեանի 1979-ին կազմակերպած ցուցահանդեսը Մանուէլ Քեօսեանի բնակարանին մէջ, ուր բոլոր գաղութի մշակութասերները ներկայ ու մասնակից եղան եւ երկար քըն-նադատական զրոյցներ ունեցան հոն՝ Քեօսեանի ղեկավարութեամբ:

Քեօսեանի բնակարանը վերածուած էր արուեստի ու հայ մշակոյթի օճախի մը, ուր ամեն գիշեր կը հաւաքուէին մտաւորական ու մշակութասեր հայ երիտասարդները, զինք սիրող տղաք, որոնք օրէ օր կ'աւելնային:

Միշտ Շահնուրի «Նահանջ»-ով պետք էր սկսելիք կամ փակելիք մեր զրոյցները:

«Կը Նահանջեն՝ ծնողք, որդի, քեռի, փեսայ, կը Նահանջեն՝ բարք, ըմբռնում բարոյական, սեր: Կը Նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը Նահանջենք բանիւ եւ գործերով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղայ, մեղայ Արարտիկ»:

Ուրիշ օրեր Ֆիշալիի պատմական սրճարանը կը հաւաքւէինք, կամ լուսնակ գիշերներ երկար ժամեր զրուցելով՝ կը քալէինք Գահիրէի քնացած նեղ փողոցներէն ու առաջին լոյսին հետ Եգիպտական ֆուլի Նախաճաշ մը կ'ընէինք ժողովրդական պարզ ճաշարանի մը մէջ:

Քեօսեան կեանքը սիրող էր, Հայաստանի, Արարատի ու Կոստան Չարեանի սիրահար մը, բայց ամէն բանէ առաջ ան բնագոյով փորձառու հոգեբան մակկավարժ մըն էր՝ հայրենասիրութեամբ վարակուած ու վարակող՝ մը իր ամբողջ շրջապատը:

Հայկ Սարգիսեանի ստեղծած «Կռունկ» երգչախումբը, Քեօսեանի քաջաւերանքով, ու աշակցութեամբ դարձաւ հայրենասիրական ու հայապահպանման ուժեղ շարժում մը, որ միաւորեց ու իր շուրջ կրցաւ հաւաքել տարբեր խաւերէ հայ պատանիներ ու երիտասարդներ:

Քեօսեան մեզի սորվեցուց մտահոգ ու գիտակից ըլլալ հայագիտութեան կարեւորութեան՝ մեր դպրոցներէն ու ընտանիքներէն ներս, գիտակից հայեր ըլլալ սորվեցուց բոլորին:

Այդ պատճառով ալ 19 նոյեմբեր 1980-ին, Քեօսեանի Եգիպտոսէն հեռանալէն ետք, ուսումնական թէյասեղանի մը ընթացքին, եւ հակառակ անոր որ Գալուստեան վարժարանին մէջ ուսողութիւն կը դասաւանդէի այն ժամանակ, սակայն խոր մտահոգութիւնս ներկայացուցի հայագիտական նիւթերու դաստիարակութեան մակարդակին մասին, ինչպէս մանրամասնօրէն նկարագրեց «Արեւ» օրաթերթի խմբագիր հանգուցեալ Աւետիս Եսփիւճեանը իր 20 նոյեմբեր 1980-ի յօդուածին մէջ, յետոյ քսան տարիներ շարունակ դպրոցի հոգաբարձու նշանակուեցայ ու ձգտեցայ դպրոցի ուսումնական մակարդակի բարելաւման:

Մանուէլ Քեօսեան կոչումով սիրահար մըն էր Հայաստանի ու հայ մշակոյթի, ան շարունակութիւնն ու մարմնացումն է Կոստան Չարեանի բոլոր գաղափարներուն ու ստեղծագործութիւններուն:

ԺԻՐԱՅՐ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Շար.ը՝ էջ 6



Շանթ Աւետիսեան



Քեօսեանի եւ Շանթ Աւետիսեանի աշակերտներն, Բաֆֆի Չէլէեան եւ Լտուար Շուշանեան գեղանկարչութեան հետեւեցան



«Չահակիր», 21 փետրուար 1980, Հայկ Սարգիսեանի Գալուստեանի երգչախումբի ու Մանուէլ Քեօսեանի մասին



«Կռունկ» երգչախումբ



Հայկ Սարգիսեան իր մասին գիրքի շնորհահանդեսին (2018), ինծի համար կը մակագրէ գիրքը:



«Արեւ» օրաթերթ, 20 նոյեմբեր 1980

«ԿՈՎԿԱՍԻ ՓԱՆԱՄԱՅԻ ԶՐԱՆՅԵԸ».

ԳԱՐԼՈՍ ԱՆԹԱՌԱՄԵԱՆԻ ԴԻՊՈԿ

ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԵՌԱԿՈՂՄԱՆԻ ՀՈԶԱԿԱԳԻՐԻՆ

Ուաշինկթընի մէջ 8 օգոստոսին ստորագրուած Ամերիկա-Ղայաւտան-Ագրպէջճան հռչակագրի մեկ-նաբանական վերլուծումներու շարքին իւրայատուկ է Գարլոս Անթառամեանի սպաներէն յօդուածը՝ «Կովկասի Փանամայի ջրանցքը», որ լոյս տեսաւ Պոլէնոս Այրես իրատարակուող «Արմենիա» թերթի կայքէջին վրայ, իրադարձութեան յաջորդ օրը։ Անթառամեան կ'ըսէ, թէ հռչակագրով աւետուող խաղաղութեան մասին գինք շնորհատրողներուն կը բացատրէր, որ հայերուն համար շնորհատրանքի ոչ մէկ առիթ կար, ընդհակառակը, Ղայոց պատմութեան իրերայաջորդ որբերգական թուականներուն վրայ աւելցող նոր թուական մըն է։

«Իրենց կը բացատրէի, որ նման համաձայնութիւններ արդար եւ մնայուն խաղաղութիւն մը հաստատելու փոխարէն՝ կ'ամրագրեն ուժով պարտադրուած իրականութիւններ, որոնք խոր վերքերու եւ անհասարկութիւններու կնիքը պիտի ձգեն ապագայ սերունդներուն վրայ։ Ըսածս պատկերաւոր բացատրելու համար կը բերէի Փանամայի ջրանցքը բաւալու Ամերիկայի որոշումին օրինակը։ Այդ նախաձեռնութիւնը օրին արժանացաւ միջազգային ողջոյնին՝ որպէս հմուտ դիւանագիտութեան յաղթանակ, մինեւոյն ժամանակ, սակայն, Զոլոմպիոյ համար եղաւ արտաքին պարտադրանք եւ իր հողատարածքի վերահսկողութեան կորուստ, իսկ Փանամային համար նշանակէց տասնամեակներ տւեաժ սահմանափակ գերիշխանութիւն»։

Կը յիշեցնէ, որ գրեթէ արեւոյջ քսաներորդ դարուն ընթացքին ջրանցքին մօտակայ տարածութիւնները եղած էին «գաղութատիրական **անըլաւի**» (միջերկիր, կղզիացած տարածք) նման բան մը՝ վերապահուած ջրանցքին ամերիկացի գործաւորներու եւ պաշտօնեաներու ընտանիքներուն, եւ անոր ապահովութեան վերահսկող ուժերուն։ Այդ տարածքները նաեւ հանրածանօթ դարձան որպէս լատինամերիկեան ցամաքամասի վրայ հակայեղափոխական խմբաւորումներու մարգումի կեդրոններ՝ տիրաւիչակ «Ամերիկաներու վարժարանը»։ Նշենք, որ հոն Ամերիկայի զաղտնի սպանարկութիւնները կը պատրաստէին բարձրաստիճան գինւորականներ, որոնք իրենց երկիրներուն մէջ պետական հարուածով իշխանութիւնը պիտի վերցնէին եւ հաստատէին բռնատիրական վարչակարգեր՝ «ներքին թշնամիին դէմ» պայքարելու համար։ «Շանորդի եւ, բայց մեր շանորդին է», անոնց մասին ըսած է Ամերիկայի նախագահ մը...

Փանաման ի վերջոյ իր գերիշխանութիւնը վերահաստատեց ջրանցքին վրայ։ Ժիշդ հակառակը կը պատահիի Սիւնիքի մէջ, կ'ըսէ Անթառամեան՝ նշելով Ռուսիոյ համար ռազմավարական նշանակութիւն ունեցող այն միջանցքը, որ պիտի բացուի, համաշխարհային ծանուցման կ'արժանանայ որպէս բոցմոփոխ ծրագիր, հնչուն անունով մը, որ «աւելի շուտ կը

յուշէ Մայամիի մէջ պերճ «դիզորթ» մը, աւելի քան՝ Կովկասի ամենալարուած շրջաններէն մէկուն համար ծրագիր մը»։

«Տանըլտի (Թրամփի) կառավարութիւնը, փոքերի երեսով, այն կը ներկայացնէ որպէս բացառապէս առեւտրական նախաձեռնութիւն, հեռու՝ ռազմական թէ ապահովական նկատառումներէ։ Կարծես թէ մեր ժամանակներու պատմութեան մէջ շատ ըլլային տազնապալի տարածաշրջաններու մէջ միջանցքներ, ուրկէ բացառապէս առեւտրական փոխանակման եւ ժպտուն զբօսաշրջիկներ կ'երթեւեկէն», կը հեզնէ Անթառամեան եւ յօդուածը կ'աւարտէ շատ կտրուկ. «Ներողութիւն, միայն կրնամ ըսել՝ «անիծեալ օր»»։

Գարլոս Անթառամեան Մեքսիքայի հայ փոքրաթիւ, բայց աշխուժ համայնքի առաջատար դէմքերէն է, մարդաբան, համալսարանի դասախօս եւ գիտաշխատող, քաջածանօթ ե՛ւ հայ սփիւռքին, ե՛ւ Ղայաստանին։ Պատահական չէ, որ Չանգեզուրի միջանցքի եւ Փանամայի ջրանցքի այս իւրայատուկ բաղդատական վերլուծումը իրմէ եկած ըլլայ. Լատին Ամերիկան հայկական վերլուծաբանական շրջանակին մէջ հազիւ թէ հետաքրքրութիւն կը ստեղծէ... Ի դէպ, Փանամայի ջրանցքին մասին Անթառամեանի յօդուածի ընկալման հաւանաբար օգնէ Ծան Լը Զարէի «Փանամայի դերձակը» վէպը (John Le Carré, The Tailor of Panama, 1996) եւ համանուն ժապաւեւը՝ Ծան Պուրմընի բեմադրութեամբ (2001)։

Անթառամեանի յօդուածը նաեւ դուռ կը բանայ ռուսական հակազդեցութեան մասին խորիրոգածութիւններու։ Թէ ստորագրուած փաստաթուղթը աւելի քան խորիրոգանշական է Կովկասի մէջ ռուսական ներկայութեան յետընթացի մը, գոնէ քարոզչական իմաստով, կասկածի տեղի չի տար։ Ատով հանդերձ, Մոսկուայի հակազդեցութիւնը շատ հեռու է ահագանցային ըլլալէ ինչպէս կ'ենթադրէին Կովկասի մէջ ռուսական ներկայութեան դէմ «Հաւաքական Արեւմուտք»-ի կամ ՆԱԹՕ-ի յառաջխաղացքով մտահոգ հիւ վերլուծաբաններ, որոնք այնպէս ալ անցնող ախլղ տարիներուն չէն յաջողած համոզիչ բացատրութիւն տալ Ռուսիոյ կողմէ տարածաշրջանին մէջ իր միակ դաշնակիցի լքումի հետեւողական փաստերուն։ Կրնայ ըլլալ, որ Ռուսիա որդեգրած է սպասումի ռազմավարութիւն մը, թերեւ՝ ճիշդ հաշուարկելով, որ ստորագրուած փաստաթուղթի գործնականացումը դեռ «շատ ջուր կը վերցնէ», թերեւ՝ աւելի քան Թրամփին Նոպէեան մրցանակի տիրանալը, որ առանձնաբար ոչ մէկ հետաքրքրութիւն կը ներկայացնէ Զրեմիլինի համար։

Խ. ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Շար.ը՝ էջ 8

ՈՒԺԵՂ ԼԱՅՈՒ ՓՐԿԱՐԱՐ Է

Կեանքի ընթացքին տխուր դէպքեր, կամ յանկարծ պատահած հոգեկան ծանր ցնցումներ պատճառ կը դառնան, որ մարդոց միտքը թուկայ եւ լալու սկսին։ Նորածին մանուկներէն սկսեալ՝ լացը մարդկային կեանքի մաս կը կազմէ, ջղային դրութեամբ հիւսուած մարդու մարմնին բնական վիճակէ մկըր ըլլալով։

Նորածին մանուկներու անխօս լեզուին փոխարէն, անոնց անօթութեան խօսքը ըլլալով՝ լացը իրենց մօտ կը կանգնէ գիրենք լոյս աշխարհ բերած մայրը, որպէսզի յագենան եւ լռեն։ Շնորաբերութեն նոր ազատած մայրեր գիտեն, թէ մօտաւորապէս երեք ժամերու դադար ունին՝ իրենց նորածինը կերակրելէ մինչեւ անոր յաջորդ անօթութեան ժամը։

Գիտակցութեան եկած անձերու պարագային տարբեր է կացութիւնը, երբ սովի մատնուած անհատներ անօթութեան անդիմադրելիութեան պատճառով կ'արտատունէ, երբեմն... առանց արցունքի... Ղայոց ցեղասպանութեան պատկերներուն մէջ կմարքացած մարմիններով սովի մատնուած մանուկներու տխուր դէմքերը այնքան յստակ կը ներկայացնեն անընդհատ լացի պատճառով արդէն չորցած աչքերը անոնց... Ուրեմն անոնց արցունքի գեղձերը չորցած էին լալէն, սակայն նայուածքը կը փաստէր լացին զգացական ներկայութիւնը՝ առանց արցունքի։

Մանկավարժական դաստիարակութեան մատուցած գիտութեան միջոցով ծանօթ է ներկայ աշխարհը, որ մանուկները ծեծի ենթարկուելով՝ կրթութեան տարիներ անցընելու դրութենէ փրկուած են։ Սակայն, ծեծի փոխարէն, խօսքը, դաստիարակչականօրէն դրուած արգելքները, ազատութեան համար կատարուած սահմանափակումները դարձեալ արցունքներ կը հոսեցնեն մանուկներու աչքերէն։

Մարդկութեան ապագան, աշխարհի քաղաքականութեան բարեգարգումը, կրօններու եւ ազգերու միջեւ փոխադարձ հասկացողութեան եզրերը՝ բոլորն ալ նախնական պատկերներով կարելի է ուրուագծել մանուկներու ուղեղներու մէջ, կեանքին նոր բացուելու անոնց ամբէն կանուխ տարիներուն։ Սակայն ո՞վ է այս մասին մտածողը, սկսեալ անոնց առաջին դաստիարակներէն՝ ծնողներէն։ Ներկայիս շատցած է թիւը այն ծնողներուն, որոնք իրենց զաւակներուն փափաքած խաղալիքներուն համար սահմանափակումներ դնելուն հակառակ են։ Անոնք յաճախ իրենց մանկութեան տարիներուն գրկուած ըլլալու դժգոհութիւնը տակաւին իրենց սրտին մէջ ունենալով, իրենց զաւակներուն բոլոր պահանջները անմիջական փութով կը կատարեն՝ կարծելով, թէ բարիք կ'ընեն անոնց...

Կեանքի օրէնքը մարդ էակին ուղեղին մէջ մանկութեան օրերուն կը հաստատուի, սակայն վերոյիշեալ մօտեցումը կ'անդրանցնի բոլոր օրինական սահմանները՝ անօրինական վարկանիշէր արձանագրելով, նոյնիսկ՝ մանկութեան տարիներուն։ Լացը լաւագոյն

միջոցներէն մէկն է մանուկներուն մօտ, նոյնիսկ՝ նոր կազմաւորուող ուղեղին պարագային, որպէսզի զգացական աշխարհին բանայ իր դուռը եւ իր հոգեկան բոլոր ծալքերուն ծանօթանալու առիթը ունենայ։

Պատահած է, որ տարեց դարձած անձեր յստակօրէն վերոյիշած են իրենց մանկութեան վաղ տարիներու լացերէն մէկուն կամ միւսին պատճառը՝ տեղափոխուելով այդ տարիները, երբ այլեւս չկան այդ լացը պատճառողները, ըլլան անոնք ծնողները, կամ այլ անձեր։ Կեանքի տեսերիզները այնքան շատ են, որ թէ նոյնիսկ ներկայ արհեստագիտութեան միջոցներով ստեղծուին հսկայական դարաններ, կարելի պիտի չըլլայ մարդկային յիշողութեան չափ ընդարձակ տեղ ունենալ։

Կան նաեւ կեղծ լացի միջոցներուն դիմողներ, զորս կարելի է նմանցնել կոկորդիլոսներուն։ Մանուկի մը լացի ծայներ արձակող կոկորդիլոսները բնագործն գիտեն, որ այդ «երեխային» օգնութեան հասանդներ անպայման պիտի ըլլան շրջակայքին մէջ... Ուրեմն անոնք լրջօրէն կը նախապատրաստուին յարձակումի, գէթ՝ քանի մը հարուածային լափերով օրունան անօթութիւնը փարատելու։

Կոկորդիլոսէն ամենէն տարածուն լացը, նոյնաձեւ կեցուածք որդեգրած մարդոց պարագային, աղքատ ձեւանալու մտայնութիւնն է։ Ասիկա փաստըւած երեւոյթ է նոյնիսկ հարուստներու պարագային, որոնք իրենց ունեցուածքը ի պահ դրած՝ անտուն, կամ գէթ անյարմար բնակարանի մը մէջ ծուարած ըլլալու իրավիճակ կը պարզէն հանրութեան մէջ։ Շատ քիչներու պարագային, անոնց մահէն ետք կը յայտնուի, թէ որքա՛ն հսկայ հարստութեան տէր եղած են, զոր առանց վայելելու, դժբախտագոյն օրերու մատնուած, հեռացրել են այս կեանքէն։ Որքա՛ն խղճալի են այդպիսի անձեր, որոնք չեն գիտցած, թէ ի՛նչ է քանի մը տասնեակ տարիներու մէջ սահմանափակուած մարդկային կեանքը...

Կայ վերոյիշեալներուն մեծաքանակ տեսակը, որուն ծանօթ է ընդհանրապէս շրջապատը։ Այսինքն՝ այն անձերը, որոնք իրենց շրջապատի մարդոց ծանօթ են, եւ որոնք գիտեն, թէ որքա՛ն հարստութեան տէր են անոնք, եւ տեղեակ են, թէ որքա՛ն կծծիութեամբ կը պահեն իրենց ունեցուածքը։ Հին ժամանակ ներքնակներու մէջ կը պահէին ոսկեդրամները, իսկ ներկայիս դրամատուններու ծածուկ հաշուետոմարներուն մէջ իրարու վրայ կը գումարուին հաշիւներ՝ երբեմն անդրանցնելով երեսակայութեան սահմանները... Ասոնք ալ թատերական լացի բացառիկ դերասաններ են, որոնք հակառակ իրենց դիրքին եւ գրպաններուն մէջ բազմապատկուած անհաշիւ գումարներուն՝ գիտեն մուրացկանի դերը տաանձնել եւ յաջողապէս խաղալ զայն։

ԳՐԻԳՈՐ ՄՐԸ. ԶԻՖԹԵԱՆ

Շար.ը՝ էջ 6

ԱՅՎԱԶՈՎՍԿԻԻ ՈԳԻՆ

ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԹԵՒԱԾԵԼ

Հայազգի մեծանուն ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսկիին ձօնուած այս բանաստեղծութիւնը կը յանձնէմ մամուլին՝ որպէս ցատումի եւ բողոքի անլռելի ձայն, Ստեփանակերտի մէջ ազերիներուն կողմէ քանդուած Յով. Այվազովսկիին արձանին համար։ Մշակութային ջարդը կը շարունակուի, յաջորդաբար կ'անէանան հայկական մշակութային արժէք ունեցող բազմաթիւ կոթողներ՝ խաչքարեր, արձաններ, եկեղեցիներ ու հնադարեան վանքեր, եւ այսպէս շարքը կ'երկարի։ Այս անմարդկային, դիւական ու սեւ նկարագիրը մեզի մտածել կու տայ, որ ազերին չունի ստեղծագործելու տաղանդ ու շնորիք, այլապէս ան ոչ մէկ արուեստի կոթող պիտի ոչնչացնէր։ Բայց ան ստոյգ թող իմանայ, որ իր վայրագութեան իբրեւ հետեւանք՝ ոչ մէկ հայկական կոթող, թէեւ՝ քանդուած, սակայն ծունկի չեկաւ, քանզի ապրելու եւ արարելու մեծ խորհուրդին մէջ կայ յարութեան ոգին, որ այլ բան չէ, եթէ ոչ՝ մոխիրներէ վերածուած կենաց կնիւն, նոր կենսքով շնչելու եւ ստեղծագործելու յաղթանակ՝ մահուան վրայ։ Այդ յարութեան ձայնով ողջ մարդկութիւնը թող իմանայ, որ ազերիին մշակույթն ու նպատակը քանդել է, ո՛չ թէ գեղեցկութեան արձան քանդակել, աւարել եւ աւերել է, ո՛չ թէ արարել եւ արեւել, այլ խօսքով մահը ապրեցնելով՝ նաեւ ըլլալ սատանային կամակատարը։ Այս առիթով եւ ամօթ կը զգամ՝ հայ ազգը բաղդատելով նման նկարագիրի տէր ազգի հետ, վասընզի կարելի չէ հակահիշ բառերը հոմանիշ նկատել։ Յովհաննէս Այվազովսկիին ձօնուած այս բանաստեղծութիւնը՝ որպէս մոխիրէ ծարձակուած կնիւն, կը նուիրեմ անոր քանդուած արձանին, յարութիւն առած ոգեղէն արձանին՝ հաւատալով, որ մեծանուն հայ ծովանկարիչը կ'ապրի իր ստեղծած բոլոր կտաւներուն մէջ եւ կը վայելէ համայն մարդկութեան սէրն ու յարգանքը։ Ուրեմն մեր բոլոր քանդուած, ու թալանուած արուեստի կոթողներուն ու մանաւանդ մեր բոլոր նահատակներուն անունով թող խօսի այս ոգեբոյր բանաստեղծութիւնը՝ ձօնուած Յովհաննէս Այվազովսկիին անթառամ ու խնկաբոյր յիշատակին։



Յարգանք քեզ հայաթոյր վրձին, Զիաւորն ես արաբչական գոյներուն, Անճիւրը երանգին՝ կենաց ձին, Կ'արշաւէ արաբութենէ արաբչութիւն։

Քեզ համար ափսոսալին, Դատարկն է անգոյն կտաւին, Անքեզ՝ անտէր է երկնման հայելին, Ուր կը շողայ բազմերանգը արեւին։

Երկուորեակն ես ծովերուն, Նոր գոյնի ակունք է վրձինը, Որմէ կը բխի գետը գոյներուն, Որոնց անձնիւրն է օրրանը։

Ծովն ու դուն երբ իրար նայիք՝ Իրարու մէջ գիրար կը տեսնէք, Եւ այնքա՛ն իրարու կը նմանիք, Ըսես անգամ երկուորեակ չէք։

Յովհաննէս Այվազովսկի,



Ոսկի ծ ո վ ն ես հայոց ազգի, Ծովէ ծով հայրենիքն ես մեր, Կտաւո՛ք՝ քարտէս երկնանուէր։

Ո՞ր ծովին ալ նայիս՝ անպայման Տեսածդ հայրենեաց լիճն է Սեւան, Ու ներկապնակդ է վրձինի կարօտ, Ու վրձինդ՝ կտաւի՝ Սեւանին կարօտ։

Արարաւոյ վիթխարի ալիք քարացած, Նոյեան տապաւնը վրան իջեւանած, Սարէն իջած Նոյին հետ էիր դուն, Աղանին էիր վերադարձած տուն։

Վրձինդ նման էր ծագած արեւին, Լուսեղէն աղանի թառած կտաւին, Նոյ նահապետին հետ իջաք Արարատի լանջին, Անսալով երկնաւոր Հօր հայրական կանջին։

Ահա, մեր նահատակաց անունով Կը հիւսենք ոգեղէն ծաղկեպսակ, Որ մեր անգին անմեռուկներով Վրձինդ զգենու սրբոց լուսապսակ։

Մարտանաւ է շիրմաքարդ, Որուն նաւապետն է արձանդ, Կատաղած փոթորիկներուն Խաղաղ նաւահանգիստն ես դուն։

Արձանիդ քարէ աչքերով Եւ անյագուրդ կարօտով, Տակաւին անծիր ծով կը փնտռես, Բայց Տեսածդ ծովին բիւն է քեզ իր մէջ առած։

Ըիրիմիդ վրայ թող իջնէ վերին լոյս, Վրադ ծագի ծովային վառ արշալոյս, Որ կտաւներդ դիտուին մէկական Հրաթեւ մարտանաւ հայկական։

Յիսուս ծովին վրայէն քալեց, Ոգին էր վերին հաւաւամբին, Վրձինդ Անոր պատգամը շարունակեց, Զթաղուեցաւ մէջ ահեղ փոթորիկին։

ԿԱԶԷ ԶԵՐԶԷՉԵԱՆ

ՅՈՒՇԵՐ ՈՒ ՏՊԱՒՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՅԱԳԷՏ...

Շարունակում 4-րդ էջին

Մանուէլ Զեւեեան սփիւռքահայ կեանքի մէջ երեւոյթ մըն է, աւելի քան՝ անձնաւորութիւն մը, յոյսի կանխելը մը՝ մեր սփիւռքի մանկավարժներուն ու երիտասարդներուն:

Իր կեանքն ու գործունէութիւնը յատկանշական էին եգիպտահայ կեանքին մէջ, նաեւ՝ սփիւռքի տարբեր համայնքներուն, ուր գործած է, ձեռքբերումներ կատարած ու ազդեցութիւն ունեցած: Արդարեւ, եթէ փնտռենք իր գործած համայնքներուն մէջ իր մատահետքերը, իր հաւատարիմ հետեւորդները պիտի գտնենք, որպէսզի, ինչպէս ինք կ'ուզեր ու կը քարոզէր, «Նաւը լերան վրայ» վէպը դառնայ ուղեցոյցը բոլոր ապագայ հայ սերունդներուն, Զեւեեանի հաւատարիմ աշակերտներուն:

Մանուէլ Զեւեեան օրինակն է համահայ սփիւռքաշրջիկ հայրենասէր մանկավարժին: Անոր կենսագրութիւնը գիրքեր ու հատորներ կրնայ լեցնել, բայց իր իրական կեանքի պատմութիւնը իր աշակերտներուն ու հետեւորդներուն հոգիներուն ու մըտքերուն մէջ փորագրուած է: Զեւեեանի պատմութիւնը կը պատկանի համայն հայ մտաւորականութեան ու մշակոյթի զարգացման պատմութեան, եւ ոչ՝ այս կամ այն համայնքին, որովհետեւ սփիւռքի զարգացման կարեւոր գործիչ մը դարձաւ իր կեանքի ընթացքին, ու նաեւ՝ իր մահէն ետք:

Իբրեւ վերջաբան՝ Զեւեեանի այս գեղեցիկ բանաստեղծութեամբ փակենք այս յօդուածը: Դոս ինք՝ Զեւեեան, կը պատասխանէ Նոյն մեր հարցումին:

Ներկայ՝
Հովը փոթորկի,
Տարերը գոռայ՝
Դուն հոն ես որդի հողի ու քարի:

Կայծակը զարնէ,
Կարկուտը տեղայ՝
Դուն հոն ես որդի ջուրի ու ծառի:
Յոյսին յանդիման՝
Երկինքը փուլ գայ՝
Դուն հոն ես որդի լեռի ու պարի:
Տուն, շէն ու աւան
Անապատանայ՝
Դուն հոն ես որդի ցանքի ու վարի:
Վերքը ճնճճերի,
Վիշտն աւելանայ՝
Դուն հոն ես որդի դեղի ու ճարի:
Թէ հայրենիքը
Հուր-գեղեն դառնայ՝
Դուն հոս ես որդի երգի ու բառի:
Երգս՝ երկիւղած
Համբոյր ու ընծայ՝
Մեծ Առօրեայիդ արդար ու արի:
Մանուէլ Զեւեեան

27 դեկտեմբեր 1988

Թերթերու նկարներու աղբիւրները
<https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Payqaram1923/1986/5.pdf>
https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Arev/1980/18705_ocr.pdf
[https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Jahakir%20Kahire/1980/1980\(791\)_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Jahakir%20Kahire/1980/1980(791)_ocr.pdf)
<https://armenian-poetry.blogspot.com/2009/08/blog-post.html?m=1>

«ԻՆՉ ՀԻԱՍՔԱՆՉ...»

Շարունակում 4-րդ էջին

Ակնեւեւ էր, որ Ալիե շատ աւելի լաւ պատրաստուած զացած էր Ուաշինկթըն եւ ինքնաբաւ վերադարձաւ: Առանց կարդալու՝ ան ինքնավստահ խօսեցաւ: Չէ՞ որ իր բոլոր պահանջները կը մտնէին իրականացման ճամբու մէջ: Եւ բնական է, որ երբ շահող, յաղթական կողմն է խօսք առնողը, շատ աւելի հանգիստ եւ հանդարտ կ'արտայայտուի: Միևնրեմ Հայաստանի «ազգընտիր» վարչապետը բաւական կմկըմալով կարողաց գրաւոր խօսքը: Ամենէն ողբերգականը, անշուշտ, տեղի ունեցաւ համաձայնագրի ստորագրումէն ետք, երբ լրագրողներու հետ հարց-պատասխանի պահուն խոյնիքն Փաշինեան ստորին խորամանկութեամբ չպատասխանեց լրագրողի մը այն հարցումին, որ կ'արծարծէր Արցախն ու արցախահայութեան իրավիճակը: Այդ մէկն ալ լաւապէս պատրաստուած բեմադրութեան մէկ արարն էր, իսկ

«շեփոխներու» շողորձոր հնչիւնները ի վերջոյ հասցուցին Թրամփի՝ Նոպեեան մրցանակի թեկնածութեան օրակարգին: Այս հայեցակետով, Միւսքի խըմբակի գոյութիւնը ոչ թէ դադրած կը համարուէր գործնական ըլլալէ, այլ խոչընդոտ կը ստեղծէր, հետեւաբար լուծուած կը համարուէր:

Ստահոգիւն այն էր, որ երբ հայրենիքը կործանման սեմին հասած է, գերիշխանութիւնը նահանջի կը մատնուի՝ համաձայնագրի ստորագրումի ժամերուն իսկ, կեր ու խումը կը շարունակուէր Երեւանի մէջ...

«Թրամփեան միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման ճամբուն» բացման առաջին ինքնաշարժին մէջ արդեօք պիտի ըլլա՞յ Նոյնիքն Թրամփը, իսկ բացման հանդիսութեան՝ այլ ամբոխահաճ երգիչ մը:

... Է՛հ, «Ինչ հիասքանչ աշխարհ մը»:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ...

Շարունակում 3-րդ էջին

Մանուկներն մէկը ինծի ըսաւ, որ կարօտցած է իր տունը, իսկ ես ալ պատասխանեցի՝ ըսելով, որ օր մը կրկին պիտի վերադառնաս քու տունդ:

Ֆորումի վերջին օրը՝ 31 յուլիսին, այցելեցինք՝ Հաղարծին, Դիլիջան, Պարզ լիճ, Սեւանայ Լիճ (կղզի) եւ Սեւանավանք: Իսկ գիշերը ունեցանք մեր վերջին մտերմիկ ընթրիքը, ուր իւրաքանչիւր մասնակից ստացաւ իր ֆորումի մասնակցութեան հաստատագիրը: Եւ այսպիսով, իր աւարտին հասաւ Ֆորում 2025-ը:

Շատ աւելի կրնամ ընդլայնել եւ մանրամասն գրել, բայց այսքանով պէտք է բաւարարուիմ:

Ոմանք ինծի հարցուցին՝ ո՞ր տարին աւելի լաւ էր: Ես ալ պատասխանեցի, թէ ամեն մէկը իր անուշութիւնն ու արժէքը ունէր, եւ երկուքն ալ պարզեցին հարուստ փորձառութիւններ, որոնք երբեք չեն մոռցուիր: 2024-ի բոլոր մասնակիցներս տակաւին կապի մէջ ենք իրարու հետ, եւ վըստահ եմ, որ 2025-ի մասնակիցներս ալ Նոյնպէս պիտի պահենք ջերմ կապ մը: Կը քաջալերեմ իւրաքանչիւր հայ ուսանող երիտասարդ՝ մասնակցելու ֆորումին, իսկ անոնք, որոնք անցեալ տարիներուն մասնակցած են, կրկին՝ առանց տատամսելու մասնակցին, որովհետեւ երկրորդ անգամը պիտի ըլլայ տարբեր եւ հարուստ Նոր փորձառութիւններով:

Խորին շնորհակալութիւնս կ'ուզեմ յայտնել Համազգայինի Կեդրոնական վարչութեան եւ Ֆորումի յանձնախումբին, որոնք ամեն տարի մեծ ջանք կը թափեն այս ծրագիրը յաջողցնելու համար՝ հայ ուսանող երիտասարդներուն առիթ տալով մօտէն ծանօթանալու տարբեր գաղութներէ եկած հայ երիտասարդներու, իրենց հայրենիքին ու մշակոյթին: Շնորհակալութիւն նաեւ խմբապետական կազմին եւ ընդհանուր պատասխանատուին, որոնք ամբողջ հաւաքին ընթացքին միշտ մեր կողքին էին:

Ֆորումը այս տարի եւս հասաւ իր նպատակին, եւ վստահ եմ, որ միշտ ալ պիտի հասնի:

ՈՒԺԵՂ ԼԱՅԸ...

Շարունակում 5-րդ էջին

Փորձառու մայրեր երբեմն իրենց սրտին վրայ քար դնելով՝ կը թողուն, որ իրենց զաւակը լայ, որպէսզի լացով աւարտէ լալու քմահաճ վարժութիւնը, կամ՝ շրջապատը իրեն ենթարկելու ունակութիւնը: Այս պարագային, ուժեղ եւ անվերջանալի թուացող լացը շուտով կը դադրի...

Երկարատեւ համարուած, բայց շուտով իր աւարտին հասնող լացին լաւագոյն բարիքը այն է, որ Նոյն լացը այլեւս չի՝ կրկնուիր: Ահա՛ ծնողական իմաստութեան օրինակ մը, որ բազմանդամ ընտանիքներու ամուր հիմքը կը կազմէ: Նոյն նպատակին համար լացը յիմարութիւն է: Այսպէս, Նոյնիսկ սիրելի մահուան համար անդադար արտասուելը անհաւասարակշիռ մարդու գործ է, որ ուրիշ գործ չունի, այսինքն անգործ է, եւ պատրաստ՝ իր ամբողջ կեանքը լացի յատկացնելու:

Կեանքի դաստիարակութիւնը պատահականութեան արդիւնք չ'է, այլ՝

լաւապէս մտածուած կրթութեամբ իրականացուող գործ: Լացի տարբեր առիթներ եւ պատճառներ ունենալը անխմաստ իրադրութիւն չէ: Չգայուն հոգեբանութեամբ ստեղծուած մարդը կրնայ յուզումներու ազդեցութեան տակ ըլլալ, սակայն միեւնոյն պատճառով լալու պարտաւորութիւն չունի, որպէսզի աստուածատուր կեանքը շարունակուի ճաւաղատաբաց:

Ուժեղ լացը փրկարար դերակատարութիւն ունի մանուկ տարիքէն սկսեալ: Ծնողական դաստիարակութիւնը անփոխարինելի արժէք ունի, եւ պէտք է օգտուիլ անոնց կեանքի օրերէն: Երանի՛ այն մարդուն, որ Նոյնիսկ իր հատուն տարիքին յիշէ իր ամենէն երկար լացի օրը... Ատիկա իմաստուն ծնողքին անվերապահ կրթութենէն մնացած թանկագին եւ միշտ փրկարար զօրութեամբ յիշատակ մը պիտի ըլլայ:

ՕՐԱՏԵՏՐ

18 ՕԳՈՍՏՈՍ

- 1826.- Պոլսոյ մեծ իրդեղը. այրեցան Գուժ Գափուի Սուրբ Աստուածածին մայր եկեղեցին եւ Պատրիարքարանը, ինչպէս նաեւ հին արձանագրութիւններ եւ ձեռագիր մատենաներ:
- 1828.- Մոսկովի բանաստեղծ Մկրտիչ Պէշկոթաշևեանի, Պոլսոյ մէջ: Մահացած է 1868-ին, Պոլիս:
- 1830.- Մոսկով բեմադրիչ եւ դերասան Յակոբ Վարդուկեանի, Պոլսոյ մէջ: Մահացած է 1902-ին, Պոլիս:
- 1888.- Հանդիսաւոր Զիմարկէշ Պոլսոյ Ետի Գուլէի Ազգային Զիւնդանոցի Նոր շէնքին:
- 1920.- Մոսկով նկարչուհի Արմինէ Կալենցի, Դամասկոսի մէջ: Մահացած է 2007-ին, Երեւան:
- 1922.- Մոսկով լեզուաբան Աշոտ Սուքիասեանի, Թիֆլիսի մէջ: Մահացած է 2007-ին, Երեւան:
- 1990.- Մահ իրաւաբան, միջազգային իրաւունքի մասնագետ Շաւարշ Թորիկեանի, Պելյուրի մէջ: Մահ էր 1926-ին, Պելյուր:
- 1994.- Կարճատեւ Կազգէն Ա. ամենայն հայոց կաթողիկոսի: Մահ էր 1908-ին, Պուրշէ: 1943-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: 1947-ին՝ Ռումանիոյ առաջնորդ 1948-ին՝ ծայրագոյն վարդապետ, 1951-ին՝ եպիսկոպոս: 1955-ին ընտրուած է ամենայն հայոց կաթողիկոս:

ՆՇԱՐ

ԵՐԲ ԱՌԻԹԵՆ ԶԵՍ ՕԳՏՈՒՐ...

Ֆութպոլը աշխարհի թիւ 1 մարզախաղն է, եւ ինչպէս կ'ըսեն «թագաւորը»:

Թէ դիրքին խաղ է կամ դժուար, ճիշդ պատասխան չկայ, բայց յստակ բան կայ, որ մարզիկները իրենք կրնան դիրարցնել կամ դժուարացնել խաղը: Իրար յոգնեցնելն ալ նոյն ձեւով պատճառ կրնայ դառնալ, որ խումբ մը արդիւնք չտայ:

Շաբաթ օր Պիամտուն մեկնեցանք դիտելու եւ քաջալերելու ՅՄԸՄ Պուրճ Զամուտը, որ լրջօրէն կը պայքարի Գ. դասակարգ բարձրանալու: Անգամ մը եւս միւս մրցումներուն արդիւնքները ի նպաստ մեզի էին, բայց մենք չկրցանք առիթները կռիւ վերածել, եւ ֆութպոլի մէջ, ինչպէս գիտենք, արդարութիւն չկայ:

ՖիֆԱ-ն քանի մը տարիէ իբրեւ թէ արդարութիւն կամ աւելի ճիշդը անսխալ մրցում ունենալու համար ՎԱՐ-ը մշտեղ բերաւ, բայց բան մը չփոխուեցաւ, եւ տակաւին սխալներ կը պատահին գրեթէ ամէն մրցումի:

Շաբաթ օրուան իրաւարարն ալ սխալներով հարուստ մրցում մը ունեցաւ: Սերժ Օսքեանի վրայ յստակ փենալթի մը կար, երբ Բ. կիսախաղին սկիզբը մրցակից պաշտպան մը ձեռքով իրեց եւ գետին բերաւ... ըստ երեւոյթին մրցումը «պետք էր հարուստ» վերջանար՝ չնեղացնելու Ռաուտա Տըքուանէն եւ ՅՄԸՄ Պուրճ Զամուտը, որոնք միասնաբար կրնան բարձրանալ Գ. դասակարգ:

ՅՄԸՄ Պուրճ Զամուտ շատ լաւ մարզիկներ ունի, բայց զարմանալիօրէն կա՛մ փորձի չեն գար միշտ, կա՛մ ալ մարզիչը տարբեր կարծիք ունի, ուր կը տեսնենք, որ բարձր մակարդակի մարզիկներ պահեստի աթոռներուն վրայ կ'ըլլան միշտ, ինչպէս՝ Ալի Ֆահս կամ Զիւսէյն Չալզալէ, մինչեւ իսկ Էլի Փիւլաւին, որ շաբաթ օր դաշտ նոյնիսկ չներկայացաւ Բ. կիսախաղին՝ մնալով պահեստի աթոռներուն վրայ, նախկին մրցումներուն միշտ մեծ դեր ունենալով հանդերձ:

Անդին բարձրահասակ ձախ ծայրի պաշտպան Չէյն Ֆայյատ, վերջին մրցումներուն կը փոխարինէ

ԿԱՐՕ Կ.

Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԶՆՆԱԳՐՈՒՄ

ՀՄԸՄ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ ՅԵՏԱԶԳԵՑ ԻՐ ԲԱՐՁՐԱՆԱԸ

ՅՄԸՄ Պուրճ Զամուտ շաբաթ օր Պիամտունի մէջ «ոսկի առիթ» մը կորսնցուց ապահովելու Գ. դասակարգ բարձրանալու իր տոմսը, երբ 1-1 արդիւնքով աւարտեց Ռաուտա Տըքուանէի դէմ իր մրցումը:

Դ. դասակարգի աւարտական հանգրուանի նախափերջին իր մրցումին, ՅՄԸՄ Պուրճ Զամուտ շատ լաւ ձեւով սկսաւ մրցումը:

6-րդ վայրկեանին Յակոբ Նաճարեանի փոխանցումէն ետք Եուսէֆ Զամատը պարտութեան մատնեց մրցակից բերդապահը, սակայն Տըքուանէի բերդին սիւնը զսպեց հարուածը:

2 վայրկեան ետք Սերժ Օսքեան Եուսէֆէն փոխանցում մը ստանալէ ետք զօրաւոր հարուած մը տուաւ, սակայն բերդապահը քոռնըր զրկեց անոր հարուածը:

Վայրկեան մը ետք, Ալեք աուր մը նետեց դուրսէն, Տիգօ փոխանցեց Ֆատըլին, որուն հարուածը զսպեց բերդապահը: Գնդակը վերադարձաւ Ֆատըլին, որ փոխանցեց կեդրոն Եուսէֆին: Այս վերջինս տուաւ



Յակոբին, որուն հարուածը դպալէ ետք յետսպահի մը, հասաւ Սերժին, որ մրցակից մը խաբէլէ ետք դէպի վեր հարուածեց՝ գրաւելով Ռաուտայի բերդը: Արդիւնք՝ 1-0:

Շար.ը՝ Էջ 8

«ՓՐԵՄԻԵՐ ԼԻԿ»

ԼԻՎԵՐՓՈՒԼ ԵՒ ՄԱՆՉԵՍԹԵՐ ՍԻԹԻ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՎ ՍԿՍԱՆ

Անգլիոյ «Փրեմիեր լիկ»-ը սկսաւ ուրբաթ գիշեր, երբ ախոյեան Լիվըրփուլ բաւական դժուար յաղթանակով սկսաւ Պորնմաութի դէմ, որ 2-0 ետ մնալէ ետք կրցած էր 2-2-ի դարձնել արդիւնքը:

Լիվըրփուլ լաւ ձեւով սկսաւ մրցումը, եւ Սալահ քիչ մնայ բաւար մրցումին հաշիւը, բայց սերպ բերդապահ Ճորճէ Փեթրովիչ զսպեց անոր ձախ ոտքի ուժգին հարուածը: Քիչ ետք, այս անգամ Սալահ փոխանցեց Վան Տայքին, որուն գլխու հարուածը քիչ մը բարձր էր:

Պորնմաութ անմիջապէս փոխադարձեց եւ Անթոնի Մետենը պոստիկ քառակուսին մէջէն քիչ մնաց անակնկալի բերեր Ալիսոնը, բայց գնդակը բարձր գնաց:

37-րդ վայրկեանին ֆրանսացի Ուկո Էքիթիքէ օգտուեցաւ Ալեքսիս Մաքալիսթըրի փոխանցումէն, որ զսպուելէ ետք Մարքոս Սենեսիի կողմէ վերադարձաւ իրեն՝ նշանակելով մրցումին առաջին կողմ: Զագիւ



վայրկեան մը ետք Էքիթիքէ կ'ոլ մը եւս պիտի նշանակէր՝ այս անգամ գլխու հարուածով, բայց քիչ մը բարձր անցաւ:

Բ. կիսախաղի սկիզբէն մօտ 5 վայրկեան ետք Էքիթիքէ Եսիսթ մը տուաւ Զոտի Կաքփոյին, որ գնդակը հանդարտօրէն գետնեց Գեթրովիչի բերդին մէջ:

Լիվըրփուլի պիտրօթակը բացուած էր, ան առիթներ ստեղծեց, բայց 64-րդ վայրկեանին կանացի Սե-

Ռայան Շերքի նշանակեցին Սիթիի 4 անպատասխան կողմը:

Սանտըլոնտ «Փրեմիեր լիկ» վերադարձաւ եւ 3-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց Ուեսթ Զամը:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԳԵՐԱՄԺԱԿ

ՊԱՅԵՐՆ ՄԻՒՆԻԽ ՇԱՀԵՑԱԼ 11-ՐԳ ՏԻՏՂՈՍԸ

Գերմանիոյ ֆութպոլի տարեշրջանը պաշտօնապէս սկսաւ, երբ շաբաթ գիշեր Պայերն Միւնիխ եղաւ հիւրը Շթութարթի՝ Գերմանիոյ գերբաժակի մրցումին, որ այսուհետեւ պիտի կոչուի «Ֆրանց Պեքընպաուրը բաժակ»:

Պայերն Միւնիխ 2-1 արդիւնքով յաղթեց մըրցումին, որուն ընթացքին իբրեւ լաւագոյն մարզիկ ընտրուեցաւ Պայերնի խմբապետ բերդապահ Մանուէլ Նոյըը:

Պայերն լաւ փոխանցումներով խմբային խաղ կիրարկեց, մինչ Շթութարթի աւելի վտանգեց Նոյըրի բերդը, որ սակայն մնաց անառիկ մինչեւ 93-րդ վայրկեան, երբ Ճէյմի Լեվելինկ նշանակեց Շթութարթի միակ կողմ:

Պայերն 18-րդ եւ 77-րդ վայրկեաններուն նշանակած էր իր կողմը, շնորհիւ Զերի Զէյնի եւ Լիվըրփուլէն Նոր միացած Լուկա Տիսի:

Պայերնի ամենէն աշխուժ մարզիկներէն էր Սերժ



Կնապրի, որ աչ ծայրի յառաջապահ դիրքի վրայ կը խաղար՝ ստանձնելով Մայքըլ Օլիսէի դիրքը, որ կը խաղար թիւ 10 դիրքին վրայ՝ Զերի Զէյնի ետին, մինչ ձախ յառաջապահ դիրքի վրայ կը խաղար Լուկա Տիսի:

Նշենք, որ ֆրանսացի Զինկլի Զոման քանի մը օր առաջ միացած էր Զրիսթիանօ Ռոնալտոյի սեւուական Նասր խումբին՝ 10 յաջող տարիներ բոլորելէ ետք Պայերնի հետ:

ԱԼԱՍՔԱՅԻ ՄԷՋ ԹՐԱՄՓ-ՓՈՒԹԻՆ . . .

Շարունակուած Ա. Էջէն

Ամերիկեան կողմէն հանդիպումին կը մասնակ-ցէին արտաքին գործոց նախարար Մարքո Ռուպիօ եւ յատուկ պատուիրակ Սթիւ Ուիթքոֆ, իսկ ռուսա-կան կողմէն՝ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով եւ Ռուսիոյ նախագահի միջազգային հարցե-րով օգնական Եուրի Ուշաքով։

Ալասքայի Անքըրէճ քաղաքին մէջ երեք ժամ տե-ւած երկկողմանի փակ ժողովի հիմնական օրակարգը Ուքրանիոյ պատերազմն էր, ինչպէս նաեւ միջազգա-յին անվտանգութեան վերաբերող շարք մը հարցեր։

Բանակցութիւններէն ետք մամլոյ ասուլիսի ըն-թացքին Փութին խօսեցաւ աւելի քան ութ վայրկեան՝ հանդիպումը կոչելով «կառուցողական», իսկ Թրամփ խօսեցաւ շուրջ չորս վայրկեան, բանակցու-թիւնները գնահատելով «շատ արդիւնաւետ» ընդգը-ծելով, որ տակաւին վերջնական համաձայնութիւն չկայ։

Փութին ըսաւ. «Ռուսիան եւ Միացեալ Նահանգնե-րը դրացի պետութիւններ են, եւ տրամաբանական էր, որ հանդիպում ունենանք Ալասքայի մէջ, որ Ռու-սիոյ եւ Միացեալ Նահանգներու հասարակաց պատ-մութեան մաս կը կազմէ»։

«Մենք նախանձախնդիր ենք ուքրանական հարցի լուծման», նշեց ան՝ աւելցնելով. «Միացեալ Նա-հանգներու հետ մեր յարաբերութիւնները Պաղ պա-տերազմէն ի վեր ամէնէն ցած մակարդակին հա-սան»։

«Բանակցութիւնները օգտակար էին եւ շրջադար-ձային», յայտարարեց Ռուսիոյ նախագահը՝ նշելով. «Ուքրանիոյ մէջ լուծումը պէտք է տեսական ըլլայ եւ նկատի ունենայ Ռուսիոյ ապահովական մտավախու-թիւնները»։

«Ամենայն անկեղծութեամբ հետաքրքրուած ենք ուքրանական տազնապին վերջ տալով, եւ ատիկա կը պահանջէ վերջ տալ տազնապին արմատական բոլոր պատճառներուն», ըսաւ ան՝ նշելով, որ Թրամփ-իի հետ համաձայն է նաեւ Ուքրանիոյ ապահովու-թիւնը երաշխաւորելու անհրաժեշտութեան առնչու-թեամբ։

«Ամերիկայի եւ Ռուսիոյ միջեւ ներդրումային գոր-ծընկերութիւնը բազմաթիւ կարելիութիւններ ունի», նշեց Փութին։

«Կը յուսանք, թէ եւրոպական մայրաքաղաքները չեն խոչընդոտեր սպատուղ յառաջընթացը կամ չեն փորձեր գայն ձախողութեան մատնել», շեշտեց Զիւմ-լինի ղեավարը՝ նշելով. «Մեր գոյացուցած համաձայ-նութիւնները ուքրանական տազնապի լուծման եւ Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու միջեւ յարաբերու-թիւններու վերականգնման հիմնաքարեր են»։

«Կը մարդետմ, որ յաջորդ անգամ հանդիպումը Մոսկուայի մէջ ըլլայ», ըսաւ Ռուսիոյ նախագահը՝ աւելցնելով. «Հնդիաստըր առմամբ, ես ու Նախագահ Թրամփը աշխատանքային յարաբերութիւններ եւ հոյակապ փստահութիւն կառուցեցինք, եւ բոլոր պատճառները ունիմ կարծելու, թէ այս հոլովոյթին մէջ յառաջ ընթանալով կրնանք հասնիլ Ուքրանիոյ տազնապի աւարտին, եւ ատիկա որքան արագ ըլ-լայ, այդքան աւելի լաւ»։

«Կը յուսամ, որ մեր գոյացուցած փոխադարձ հասկացողութիւնները մեզի կ'արտօնեն մօտենալու այդ նպատակին եւ ճամբան բանալու Ուքրանիոյ մէջ խաղաղութեան։ Առանցքային սիրերէն մէկը Ուքրա-նիոյ շուրջ կացութիւնն էր։ Ռուսիոյ համար, Ուքրա-

նիոյ իրադարձութիւնները մեր ազգային անվտան-գութեան հիմնական սպառնալիքներուն առնչուած են», ըսաւ ան։

Սպիտակ տան ղեկավարը յայտարարեց, որ պի-տի հեռաձայնէ Ուքրանիոյ նախագահ Վոլոտիմիր Չելենսքիին եւ ՕՊԱՆ-ի գործընկերներուն՝ տեղե-կացնելու համար Փութինի հետ հանդիպումի բովան-դակութեան մասին։

Միացեալ Նահանգներու նախագահը իր կարգին յայտարարեց. «Կան կէտեր, գորս չկրցանք շրջանցել, սակայն յառաջընթաց արձանագրեցինք։ Շուտով պիտի հեռաձայնեմ ՕՊԱՆ-ի ղեկավարներուն ու առնչակից կողմերուն»։

«Այսօր իրապէս մեծ յառաջընթաց արձանագրե-ցինք», շեշտեց ան։

«Փութինի հետ դարձեալ ժողով պիտի գումարեմ, հաւանաբար շուտով», նշեց Սպիտակ տան ղեկավա-րը՝ աւելցնելով. «Չափազանց արդիւնաւետ ժողով մըն էր, եւ շարք մը կէտերու շուրջ համաձայնութիւն գոյացաւ»։

Ժողովէն ետք Թրամփ ամերիկեան «Ֆոքս Նիուզ» պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյցի ըն-թացքին յայտարարեց. «Չելենսքիին խրատս գոր-ծարք կնքելն է։ Ռուսիան շատ հզօր երկիր է։ Համա-ձայնութիւն գոյացնելու շատ մօտ ենք, եւ Ուքրա-նիան պէտք է անոր համաձայնի, կամ թերեւս գայն պի-տի մերժժ, եւ պիտի կազմակերպենք Փութինի հետ անոր ժողովը, որուն թերեւս ես ալ մասնակցիմ»։

«Խնդիրը այն չէ, որ ես կ'ուզեմ այնտեղ ըլլալ, այլ կ'ուզեմ վստահ ըլլալ, թէ համաձայնութեան պիտի հասնին։ Եւ մենք ատոր համար լաւ կարելիութիւն ու-նինք», նշեց Թրամփ։

«Համաձայնանութիւն չկայ, որպէսզի համաձայնու-թիւն գոյացնեն, սակայն մեծ յառաջընթաց արձա-նագրեցինք։ Կը կարծեմ, որ այսօր չափազանց լաւ ժողով գումարեցինք, եւ կը կարծեմ, որ բազմաթիւ կէտերու շուրջ բանակցութիւն տեղի ունեցաւ։ Կան մէկ կամ երկու կարեւոր կէտեր, որոնց շուրջ պէտք է համաձայնութիւն գոյացնել, եւ կարելի է ատիկի իրազօրեմ։ Կը կարծեմ, որ այսօրուան ժողովը չա-փազանց լաւ ընթացաւ, եւ թերեւս լաւ արդիւնքի կը հասնինք», նշեց Թրամփ։

«Բանակցեցանք կէտերու շուրջ, որոնք կը ներա-ռեն ՕՊԱՆ-ը, ապահովութեան դասաւորումները եւ հողերու փոխանակումը (Ռուսիոյ եւ Ուքրանիոյ մի-ջեւ, «Ա.»), յայտնեց Միացեալ Նահանգներու նա-խագահը՝ նշելով. «Փութինի հետ բանակցութիւննե-րը լաւ էին, եւ ներկայիս պէտք չկայ պատժամիջոցնե-րու հաստատման մասին մտածելու»։

«Վաւառիմորը ինձի ըսաւ, թէ ոչ մէկը տեսած եմ, որ քեզի պէս այս արագ աշխատանքը կը տանի», ըսաւ Թրամփ։

Զիւմլին յայտարարեց. «Փութինի եւ Թրամփի մի-ջեւ բանակցութիւնները չափազանց դրական էին եւ կարգաւորման կարելիութեան որոնման հոլովոյթին մէջ միասնաբար վստահութեամբ յառաջ ընթանալու ճամբան կը հարթեն»։

Ռուսիոյ նախագահի օգնական Եուրի Ուշաքով յայտարարեց, որ Փութին-Թրամփ հանդիպումի ըն-թացքին Փութին-Թրամփ-Չելենսքի հանդիպումի հարցը չէ արծարծուած։ Ան նաեւ նշեց, թէ տակաւին չի գիտեր, թէ Փութինի եւ Թրամփի յաջորդ հանդի-պումը ե՞րբ տեղի պիտի ունենայ։

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՅՈՒԹԵԱՆ . . .»

Շարունակուած Ա. Էջէն

Արամ Ա. Կաթողիկոսի Նախագահու-թեամբ, շաբաթ, 16 օգոստոս 2025-ի երեկոյեան, Սուրբ Աստուածածին վան-քի համանուն մատրան ղօղանջներուն ներքեւ ընթացք առաւ սուրբ պատարա-զը, որ մատուցեց կաթողիկոսարանի դիւանապետ Տաճատ եպս. Աշըգեան, իսկ երգեցողութիւնը կատարեց կաթօ-ղիկոսարանի «Շնորհալի» երգչախումբ-ը՝ խմբավարութեամբ Զաւէն վրդ. Նա-ճարեանի։

Յաւարտ սուրբ պատարագին, հայ-րապետական թափօրով սուրբ խորան բարձրացաւ վեհափառ հայրապետը, միաբան հայրերու ընկերակցութեամբ, եւ նախագահեց խաղողօրինէջի ու մա-տաղօրինէջի արարողութեան։ Ապա յղեց իր հայրապետական պատգամը։ Հայրապետական օրինութեամբ, քրիս-տոնեական ջերմ սիրով եւ ազգային վառ ապրումներով ողջունելէ ետք մեր ժողովուրդի գաւակները, վեհափառ հայրապետը գոհութիւն ու փառք տը-լաւ Աստուծոյ, որ ահաւասիկ անգամ մը եւս ուխտանորաբար համախմբուած ենք մեր ժողովուրդին սիրելի սրբավայ-րին՝ Սուրբ Աստուածածին վանքին մէջ, նշելու համար անոր խնստի օրը։ Վեհա-փառ հայրապետը ընդձօնց եկեղեցւոյ կեանքին մէջ սուրբերուն առանցքային դերակատարութիւնը եւ անոնց տօնե-րու նշման առթած հրաւերը՝ մեր հա-ւատքը ամրապնդելու եւ քրիստոնէա-կան ինքնութիւնը բիրտղացնելու, յատ-կապէս ներկայ աշխարհի երեւելի եւ աներեւոյթ չարերուն ու չարիքներուն դիմաց։ Այս առիթով, վեհափառ հայրա-պետը թորգմամբ դառնալով հաւատա-ցեալներուն, աղօթք վերառաքեց՝ խընդ-րելով Ամենակալէն բարի գործերու յա-ջողութիւն, ճամբորդներուն ապահովու-թիւն, հիւանդներուն առողջութիւն, կա-րիքաւորներուն օգնութիւն, հայ ազգին միութիւն։

Խօսելով Հայաստանի ներկայ կա-ցութեան մասին՝ վեհափառ հայրապե-տը դիտել տուաւ, որ Հայաստանի ան-կախութիւնը, անվտանգութիւնն ու ամ-բողջականութեան ամուր պահպանու-մը կիզակնէն է իր եւ հայրապետական սուրբ աթոռին մտահոգութեանց, իսկ այս գծով Կիլիկիոյ սուրբ աթոռին տե-սակնէտէրն ու առաջադրանքները յըս-տակ եւ հետեւողական կերպով կը պարզուին հրապարակային գանազան առիթներով։

«Հայաստանը այսօր իրողապէս կը գտնուի ներքին ճեղքներու առաւել խո-րացումով ու աննախատեսելի հետեւ-անքներով յղի պայմաններու մէջ», ըսաւ Արամ Ա. Կաթողիկոս՝ նշելով ներքին ճակատի վրայ իշխանութիւն-եկեղեցի յարաբերութիւնը, իսկ արտաքին ճա-կատի վրայ, Վերջերս Ուաշինկթընի մէջ, Ամերիկայի Միացեալ Նահանգներու

«ԿՈՎԿԱՍԻ ՓԱՆԱՄԱՅԻ ...»

Շարունակուած 5-րդ Էջէն

Բայց նաեւ կրնայ ըլլալ, որ Ռուսիա այս եռակողմանի հռչակագրի քիչ մը անհասկնալի «նախաստորագրութիւ-նը», հետեւաբար՝ Չանգեզուրի մի-ջանցքը կամ Թրամփի ուղին, ընկալէ որպէս Ամերիկայի հետ բանակցային գործօն։ Եւ այդ տրամաբանութեամբ է, որ միացաւ միջազգային համայնքին՝ ողջունելով «Կովկասի Փանամայի ջրանցք»-ը, որ հինգ տարի առաջ ինք ուզած էր իրականացնել եւ վերահիւս-կել...

8 օգոստոսէն մէկ շաբաթ յետոյ Թրամփ եւ Փութին պիտի ունենան իրենց առաջին հանդիպումը Ալասքայի մէջ՝ քննելու համար Ուքրանիոյ պատե-րազմը աւարտելու ձեւը։ Հանդիպման վայրը խորդակնշարկան է. այն հողա-տարածքն է, որ մաս կը կազմէր ցարա-կան կայսրութեան եւ Ալեքսանտր Բ. Ամերիկայի վաճառեց 1867-ին՝ տասնա-մեակ մը առաջ Խրիմի պատերազմով պարպուած իր գանձարկղին եկամուտ (7,2 միլիոն տոլար) ապահովելու հա-մար։ Ճիշդ է, որ ատենին ռուս ազգայ-նականներ ընդդիմացան եւ երկար ժա-մանակ երազեցին վերատիրանալ տա-րածաշրջանին, բայց վերջին հաշուով հողատարածքներու, յաճախ՝ իրենց բնակչութեամբ, առուծախը վերապահ-ւած էր՝ կայացած, բայց սնանկացած կայսրութիւններու, գաղութատեր մեծ տերութիւններու, թէ ծնունդ առնող, բայց արդէն ծաւալապաշտական ախորժակներով յատկանշուող կարո-ղական գերութերու։

Թէ ի՛նչ արդիւնք պիտի տայ 15 օգոս-տոսի Թրամփ-Փութինի հանդիպումը, կամ Ռուսիոյ ողջունումը՝ 8 օգոստոսի Ամերիկա-Հայաստան-Ազրպէյճան եռա-կողմանի հռչակագրին, ինչպէ՛ս կրնայ առնչուիլ Ուքրանիոյ մասին այս բա-նակցութիւններուն՝ թերեւս կարելի ըլ-լայ մեկնաբանել հանդիպումէն ետք միայն։ Կը մնայ, որ Փութին հասկցած է,

Նախագահին միջամտութեամբ ու վկա-յութեամբ կցըուած Հայաստան-Ազըր-պէյճան համաձայնագիրը։ Վեփափառ հայրապետը շեշտեց, որ «հարկ է կա-րեւորութեամբ անդրադառնալ, թէ մեր եկեղեցին մեր ազգին ինքնութեան կա-րեւորագոյն ազդակներէն եւ մեր գոյու-թեան ամէնէն զօրեղ կառոյցներէն մէկն է, անկասկած։ Բոլոր պայմաններուն մէջ, պէտք է գայն պահել կազմակերպ՝ իր ներքին կեանքով, ու ամուր՝ իր հայ-րենակերտ եւ ազգաշէն առաքելու-թեամբ»։

Խօսելով ստորագրուած յիշեալ հա-մաձայնութեան մասին՝ վեհափառ հայ-րապետը մտահոգութեամբ անդրա-դարձաւ դարերու ընթացքին մեծ ուժե-րու կողմէ յաճախ կռուախնձոր դար-ձած Հայաստանին՝ այսօր աշխարհա-քաղաքական ուժերու բախումի հանդի-սարան դառնալու վտանգին ենթակալ ըլլալուն։ Ան այդ, ան ահագանգ հնչե-ցուց եւ յորդորեց ըլլալ արթուն եւ զգուշ, որովհետեւ նորը շինելու հեռանը-կարով հինը մոռացութեան դատա-պարտելու փորձը, մեզ անցնալին ու ապագային կապող կամուրջները քան-դէն ու Հայաստանը սփիւռքէն հեռացը-նելու ճիգերը մեզ կրնան առաջնորդել դէպի ազգաքանդուի։

Վերջապէս, վեհափառ հայրապետը մշեբերդով պատմահայր Մովսէս Խո-րանցիի «Ողբ»-էն, ըսաւ. «Սա պահուն «ցաւալի ու տխուր» խօսքէն անդին, արթնութեան ու պատասխանատուու-թեան կոչ պիտի ուղղեց հայրենի մեր սիրելի ժողովուրդին... սթափի՛ր, յուսա-հասնութեան ու անտարբերութեան ալիքներուն մէջ տատանող հայրենի՛ ժողովուրդ. դուն ըսելիք ու ընելիք ու-նիս, որովհետեւ իշխանութեանը դո՛ւն ես, պետութիւնը դո՛ւն ես, եկեղեցին դո՛ւն ես. հետեւաբար, նաեւ Հայաստա-նի ապագայ ընթացքը ճշդողը դո՛ւն պի-տի ըլլաւ»։ Վեհափառ հայրապետը եզ-րափակեց իր պատգամը կոչ ուղղելով դարդեցնելու լուզուկներու ու ամբաս-տանութիւններու, սպանալիքներու ու ձերբակալութիւններու հայրենաքանդ արշաւը եւ սկսելու լուրջ քննարկումնե-րու գործընթացին՝ յարգանքի մթնոլոր-տին մէջ եւ օրէնքի ու իրաւունքի սահ-մաններուն մէջ։ «Այս կը պահանջէ հայ-րենիքը։ Այս գիտակցութեամբ ու յանձ-նառութեամբ կոչուած են գործելու հայ-րենիքին հզօրութեան, եկեղեցւոյ պայ-ծառութեան ու ազգին միութեան նա-խանձախնդիր ու պաշտպան բոլո՛ր պատասխանատուները»։

Սուրբ պատարագի մատուցման, մատաղի ու խաղողի օրհնութեան եւ հայրապետական պատգամի աւար-տին, հաւատացեալները հաղորդութիւն-ստացան, ինչպէս նաեւ օրինուած մա-տաղ ու խաղող։

ՀՄԸՄ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ ՅԵՏԱԶԳԵՑ . . .

Շարունակուած 7-րդ էջէն

Արդիւնքը շատ բնական էր ՀՄԸՄ-ի ճնշումին ետք։ ՀՄԸՄ շարունակեց ճնշել մրցակիցին վրայ, բայց յա-ճախ տղաք իրար կը յոգնեցնէին երկար **սփրիկննե-րով**, ուր Սերժ եւ Տիգօ բազմիցս կատարեցին **սփ-րիկներ**, որոնք ապարդիւն էին։

Մրցումին պատկերը մնաց անփոփոխ, եւ ՀՄԸՄ շատ դիւրութեամբ կը կատցնէր մրցակիցին յարձա-կումները, ուր Պեգզի (աշէն), Աքիլ եւ Զասեմ (կերդո-նէն) եւ Ալբե (ձախէն) միշտ պատրաստ էին կատցնե-լու յառաջացող մրցակիցները։

Յակոբ եւ խմբապետ Աիկ կերդոնէն կը կա-սեցնէին գնդակը եւ կը փորձէին յարձակումներ կազ-մակերպել։

Գիսախաղէն քիչ առաջ 47-րդ վայրկեանին Եուսե-ֆի օդային փոխանցումէն ետք Ֆաւռը Ռիտա գլխու հարակածով քիչ մնաց նշանակէր կոլ մը, բայց բերդա-պահը մատնէրուն ծայրով քռռնըր դրկեց ոսկի առի-թը։

Բ. կիսախաղին, հազիւ 4 վայրկեան անցած էր, երբ իրաւարարը արդար փենալթիւ մը գրկեց ՀՄԸՄ-ը, երբ Սերժ մեր քառակուսին մտնելէ ետք մրցակից յետսապահէ մը գետին բերուեցաւ, երբ ան ձեռքով հրեց գալի։

52-րդ վայրկեանին յարձակումի մը պահուն զըն-դակը դպաւ մրցակիցի մը ձեռքին, բայց իրաւարա-րը... շարունակեց մրցումը։

58-րդ վայրկեանին Հիւսէյն Պեգզի մրցակիցէ մը խլեց գնդակը, բայց ճըն-շումի տակ դէպի ետ կը վազէր քռռնըրի կողմէն եւ կը փորձեր փոխանցել Սոհամէտ Զասեմի, բայց մրցակիցը գայն առնելով փոխանցեց կերդոն, ուր Հասան Այրուպ նշանա-կեց հաւասարութեան կոլը։	
Արդէն Իպրահիմ Մու-սաուի եւ Ալի Ֆահս կը պատրաստուէին դաշտ ներկայանալու, երբ Ռուտաւ կոլ նշանակեց։	
Սերժ եւ Ֆարըլ փո-խարինուեցան։	62-րդ

Կ՛ՈՒԶՈՒԻ

Հաստատութիւն մը՝ Տորայի շրջա-նին մէջ, անմիջա-կան կարիքը ունի հաշուապահի մը, աշխատանքի լիա-ժամ կամ կիսաժամ դրութեամբ, ըստ յարմարութեան։ Դիմել՝ հեռ. 03-164767։

	ԿԵՏ
1.- Ռաուտա Տըքուանէ	8 (10-3)
2.- ՀՄԸՄ Պուրճ Համուտ	7 (7-4)
3.- Շէքքա	6 (10-6)
4.- Լիուաա Սայտա	6 (7-8)
5.- Ամալ Սալամ Չդարթա	5 (7-7)
6.- Սանհարիպ	1 (3-16)

Վերջին շաբթուան մրցումները տեղի պիտի ունե-նան այս կիրակի (սկզբունքով՝) հետեւեալ յայտագի-րով.

ՀՄԸՄ Պուրճ Համուտ - Ամալ Սալամ Չդարթա (Ճիւնիի դաշտ)

Ռաուտա Տըքուանէ - Շէքքա Սանհարիպ - Լիուաա Սայտա

ԱԶԴԱԿ

Հեռ. (01) 258526 - 260115 - 241274
ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

AZTAG

TEL.: (01)258526 -260115 -241274 - E-mail: info@aztagdaily.com
FAX: (01) 258529 - P.O.BOX: 80860 BOURJ HAMMOUD

هاتف: ٢٥٨٥٢٦ - ٢٦.١١٥ - ٢٥٨٥٢٦
فاكس: ٢٥٨٥٢٩ - (٠١) ص.ب. ٨٠٨٦٠ ب.ج.حمود